Azg Վազ

27 ՅՈՒԼԻՍ 2004 ԵՐԵՔՇԱԲԹԻ 138 (3069)

Սուխումի կառավարությունը պատրաստվում է հեռ մղելու վրացական կողմի հարձակումը

ՍՈՒԽՈՒՄ, 26 ՅՈՒԼԻՍ,ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սուխումի կառավարությունը պատրաստվում է հեռ մղելու վրացական կողմի հարձակումը: Այդ նպատակով այսօրվանից հանրապետությունում սկսվում են զինուժերի շաբաթային վարժանքներ: «Սուխումի կառավարությունը, վրացական կառավարողների կողմից Աբխազիայի վերաբերյալ արվող ագրեսիվ հայտարարությունների պայմաններում, սիրված է խստացնել պետական բոլոր կառույցների աշխատանքի հսկողությունը, որպեսզի արագ հակազդեցություն ապահովի ագրեսիային, եթե այն իրականացվի Վրաստանի կողմից», Աբխազիայի կառավարության նիստում հայտարարել է վարչապետ Ռաուլ Խաջիմբան: Նիստին մասնակցել են նաեւ քաղաքային ու շրջանային վարչակազմերի ղեկավարները:

Խաջիմբան ասել է, թե այն իրավիճակում, երբ Վրաստանի կառավարության առաջին դեմքերը բացահայտորեն հայտարարում են Աբխազիան Վրաստանի կազմ վերադարձնելու իրենց պլանների մասին, աբխազական կողմն այլ ելք չունի, քան հոգ տանել սեփական զինուժերի մարտունակության, պահեստայիններին մոբիլիզացման համակարգի աշխատանքը կատարելագործելու մասին:

Վրաստանի համար շահավետ կլիներ Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթուղու գործարկումը

Անդրանիկ Մարգարյանի հանդիպումներ Միխայիլ Սաակաշվիլու եւ Զուրաբ Ժվանիայի հետ

ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսի

Վարչապետ Զուրաբ Ժվանիան երեկ իր հայ գործընկեր Անդրանիկ Մարգարյանի հետ համատեղ մամուլի ասուլիսում ասաց, որ Վրաստանի համար շահավետ կլիներ Թուրքիայից Հայաստան մտնող երկաթուղու շահագործումը:

«Մենք այդ հարցով թուրքերի հետ քննարկումներ չենք ունեցել, որովհետեւ դա առաջին հերթին հարց է, որ պետք է վճռվի թուրք-հայկական պայմանավորվածությունների շրջանակներում: Այսօրվա մեր հանդիպման ընթացքում Հայաստանի վարչապետն այդ հարցը դրել է (օրակարգում): Կարծում եմ, մենք կարող ենք այդ հարցում (թուրք-հայկական երկաթուղով՝ Կարս-Գյումրի, Թուրքիայից Վրաստան բեռնափոխադրումների- խմբ.) երկխոսություն սկսել մեր թուրք գործընկերների հետ, բայց դա հարց է, որ առաջին հերթին վերաբերում է երկկողմ (հայ-թուրքական) հարաբերություններին: Անշուշտ, Վրաստանի համար շահավետ կլիներ, եթե հայտնվի նոր ճանապարհ երկաթուղային փոխադրումների համար», ասաց Ժվանիան:

Պաշտոնական երկօրյա այցով Թբիլիսիում գտնվող վարչապետ Մարգարյանը երեկ հանդիպումներ

ունեցավ Վրաստանի «վարդյա» առաջնորդ Միխայիլ Սաակաշվիլու եւ իր վրաց գործընկեր Զուրաբ Ժվանիայի հետ: Տեղի ունեցավ հայ-վրացական միջկառավարական հանձնաժողովի նիստ երկու երկրների վարչապետների նախագահությամբ: Քննարկվեցին մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում են տարածաշրջանի խողովակաշարերին, էներգետիկային, կոմունիկացիաներին, երկաթուղիներին:

Ժվանիան ասուլիսում ասաց, որ «այսօրվա դրությամբ գործում են լուրջ սակագնային զեղչեր Հայաստանից եւ այլ երկրներից եկող բեռների համար», այնպես որ Վրաստանը, ինչպես ակնկալեց վարչապետը, երկաթուղով բեռնափոխադրումների սակագների հարցում ելակետ է ընդունում տնտեսական փոխշահավետությունը: Տես էջ 2

ՀԱՊՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԱՐԻԶԻՑ

ՌԱԿ-ՀՅԴ միատեղ բողոքի ցույց թուրք վարչապետ Էրդողանի Ֆրանսա այցելության առթիվ

Քաղաքական մեր երկու աւանդական կուսակցություններուս՝ Ռամկավար Ազատական Կուսակցության ու Հայ Յեղափոխական Դաշնակցության միատեղ կազմակերպությամբ, Ֆրանսահայությունը անգամ մը եւս ցույց տուաւ քաղաքական իր արթնությունը՝ բողոքելով Թուրքիոյ վարչապետ Էրդողանի Ֆրանսա այցելության առթիւ: Ֆրանսան եղաւ միշտ այն երկիրը, որ մինչեւ այսօր կը մերժէ Թուրքիոյ մասնակցությունը եւրոպական ընտանիքէն ներս, հակառակ ամերիկեան բազմաթիւ ճնշումներուն:

Էրդողան Գերմանիայէն ու Հոլանդայէն ետք, յուլիս 19-21-ին Փարիզի մէջ ունեցաւ հանդիպումներ նախագահ Ժակ Շիրակի ու Ֆրանսայի այլ անձնաւորություններու հետ ապահովել ջանալու Ֆրանսայի զօրակցությունը դեկտեմբեր 2004-ին Թուրքիոյ Եւրոմիության մասնակցելու բանակցություններուն մէջ:

ՌԱԿ-ն ու ՀՅԴ-ն այս առթիւ կոչ ուղղեցին Ֆրանսահայության մասնակցելու բողոքի ցոյցի մը: Կոչին մէջ կ'ըսուէր. «Այս պահուն, երբ Ֆրանսայի հանրային կարծիքը ժխտական է Թուրքիոյ անդամակցության հանդէպ, յատկապէս Հայկական ցեղասպանության ուրացման պատճառով, չենք կրնար ընդունիլ, որ Ֆրանսացիները դուրսի իրենց կողմէ անընդունելի որոշումի մը առաջ: Չենք կրնար ընդունիլ, որ ցեղասպանությունը ուրացող Թուրքիան միանայ յիշողության եւ մարդկային իրաւանց Եւրոպային: Չենք կրնար ընդունիլ, որ Թուրքիոյ վարչապետ մը մեր աչքերուն առջեւ տանի ապատեղեկատուական արշաւ մը, որուն արձագանգ կը դառնան հաճոյակատար լրատու գործակալությունները»:

Տես էջ 2

Ղարաբաղի մասին Բաքվի տեսակետները Կազիմիրովի գնահատմամբ

«Ռեգնում» գործակալությունը «Նորություններ Ադրբեջանի թեմայով» ինտերնետային էջում տեղ է հասցրել հայտնի ռուս դիվանագետ Վլադիմիր Կազիմիրովի Ղարաբաղի առնչությամբ տեսակետներին, որոնց հիմքում ԵԱՀԿ Մինսկի խմբի տարածաշրջան կատարած վերջին այցելությունը եւ Բաքվում դրա առաջացրած բուռն դժգոհություններն են: Մինչդեռ, ինչպես նշում է Կազիմիրովը, Ղարաբաղի նման սուր հիմնահարցերին պետք է մոտենալ սառը դատողությամբ եւ տրամաբանությամբ:

Հոդվածում ռուս դիվանագետը հետահայաց անդրադառնալով հիմնահարցի փուլերին, ցույց է տալիս Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի ու Ադրբեջանի պաշտոնական շրջանակների տարածային ամբողջականության, ադրբեջանական գրավյալ տարածքների վերաբերյալ Հայաստանին հասցեագրած մեղադրանքների սնանկությունը: Հոդվածն ուշագրավ է, ավելի մանրամասն կներկայացնենք առաջիկա համարներից մեկում: Հ. Ց.

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը նոյեմբերին կայցելի Հայաստան

ԲՐՅՈՒՍԵԼ, 26 ՅՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յաապ դե Հոոպ Սխեֆֆերը Հայաստան կայցելի ընթացիկ տարվա նոյեմբերի սկզբին: Այս մասին հայտնել են ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում:

Սխեֆֆերի այցը կարող է կապված լինել ՆԱՏՕ-ի Ստամբուլի գագաթաժողովի ընթացքում ընդունված որոշումների կենսագործման հետ:

Ինչպես հայտնի է, Ստամբուլում դաշինքը փաստաթուղթ իր որոշումը Հարավային Կովկասում եւ Միջին Ասիայում ակտիվացման մասին:

Նշենք, որ հայկական կողմը բազմիցս հայտարարել է, որ ՆԱՏՕ-ի անդամության հեռանկարը պաշտոնական Երեւանի օրակարգում չկա: Միաժամանակ Հայաստանը պատրաստվում է ներկայացնել ՆԱՏՕ-ի հետ անհատական գործընկերության հայտ (Individual partnership plan), եւ պատրաստակամություն է հայտնել իր տարածքում ընդունելու ՆԱՏՕ-ի Cooperative Associate 2005 զորավարժությունները:

Սթիվեն Ման. Բաքուն եւ Երեւանը պետք է պատրաստ լինեն փոխզիջումների

ԲԱՔՈՒ, 26 ՅՈՒԼԻՍ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Սթիվեն Մանը հայտարարել է, որ համանախագահների վերջին այցը պլանային էր եւ նպատակ ուներ մոտեցնել կողմերի դիրքորոշումները:

Այն դիտողության առնչությամբ, որ ադրբեջանական հասարակության մեջ Մինսկի խմբի դիրքորոշումը բացասաբար է ընդունվում եւ համանախագահներին նույնիսկ երբեմն անվանում են «խաղաղական գրոսաշրջիկներ», Մանն ասել է. «Մենք՝ խաղաղագետներս, սովոր ենք խիստ քննադատությանը, բայց դա մեզ չի ստիպեցնում: Բանակցությունները իրապես դժվարին են, իսկ հասարակայնությունը մեզանից շատ բան է սպասում: Մենք ասվածներ չենք: Լուծման պետք է գան կողմերը: Մեր նպատակն է, որ որեւիցե որոշման հասնենք հակամարտության որեւիցե կողմից: Բանակցությունների հաջողությունը կախված է կողմերի փոխզիջման գնալու պատրաստակամությունից: Բանակցությունների համար պատասխանատվությունն ընկած է Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների, այլ ոչ թե միջնորդների ուսերին: Եվ բանակցություններում առաջընթացը նույնպես կախված է նրանցից: Դրա հետ մեկտեղ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի շրջանակներում բանակցությունների ճանապարհով դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը համապատասխանում է ԱՄՆ-ի ազգային շահերին»:

Այն հարցին, թե ԱՄՆ-ը կպատասխանի արդյոք Ադրբեջանին, եթե նա որոշի ուժով վերականգնել իր տարածային ամբողջականությունը, Սթիվեն Մանը պատասխանել է, որ Միացյալ Նահանգները անփոփոխ կերպով հանդես է գալիս դարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման օգտին: «Եկեք ողջամիտ լինենք եւ գնանք փոխզիջումների: Միայն փոխզիջմամբ կարելի է գտնել փոխընդունելի լուծում: Ցանկացած բանակցություններում, նույնիսկ բիզնեսում, անկարելի է հաջողությունների հասնել, եթե չլինեն փոխզիջումներ: Հենց դրանցում են համանախագահները տեսնում տվյալ հակամարտության լուծումը», ընդգծել է Մինսկի խմբի ամերիկացի համանախագահը եւ ավելացրել, որ «Ադրբեջանը եւ Հայաստանը պետք է պատրաստ լինեն փոխզիջումների: Միայն այդ ճանապարհով կարելի է երկարաժամկետ խաղաղության հասնել այդ տարածաշրջանում»:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՅԱԳԱՆՔՆԵՐ

«Հայաստանը դինամիկ արտաքին քաղաքականություն է վարում եւ արձանագրում հաջողություններ»

Այդ մասին խոսքվանելն այլ ելք չի թողնում թուրքերին, քան զրպարտությունը

ՀԱՐՈՒԹ ՉԱՔԱՐՅԱՆ

Եվրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը թուրք խորհրդարանականի հարցին պատասխանել էր. «Մենք չենք կարողանում հասկանալ Հայաստանը շրջափակելու եւ միջազգային ասպարեզում նրան հակադրվելու ձեր մոտեցման պատճառը: Եթե ձեզ թվում է, թե չենք կարող առանց Թուրքիայի գոյատեւել, սխալվում եք: Հայաստանն առանց ձեզ գոյատեւում է եւ նորմալ զարգանում»:

Ըստ ամենայնի, Քոչարյանի այս պատասխանը փաստի առջեւ էր կանգնեցրել թուրքերին, որ նրանք հայտնվեցին շփոթմունքի մեջ: Դրա արտահայտությունը պատասխանի՝ միմյանց հակասող գնահատականներն էին: Թուրքական որոշ թերթեր ՀՀ նախագահի վերոհիշյալ խոսքերը գնահատեցին «Թուրքիայի հետ համագործակցության» կոչ, մյուսները՝ «սադրանք»: Մինչ թուրք քաղաքագետները հերքում էին «համագործակցության» մասին թերթերի գնահատականը, միաժամանակ նախազգուշացնում թուրքական իշխանություններին, որ նրանք «ուշադիր լինեն Հայաստանի հետ հարաբերություններում», ահա հուլիսի 8-ին Երեւանում ՀՀ արտգործնախարարը կրկնեց մինչ այդ Վաշինգտոնում արած հայտարարությունը, թե «Հայաստանը վետոյի իրավունքը կօգտագործի ԵԱՀԿ-ում Թուրքիայի թեկնածության դեմ»:

Այս պայմաններում Թուրքիան հրաժարվեց 2007 թ. ԵԱՀԿ-ի նախագահությունը ստանձնելու պատասխանությունից, իսկ Կիպրոսի արտգործնախարար Յորգո Յակովուն հաստատեց դրա պայմանավորվածությունը վետո դնելու Հայաստանի սպառնալիքով: Այլ կերպ՝ եթե ՀՀ նախագահը վերոհիշյալ պատասխանով վերջնականապես զինաթափում էր թուրքական կողմին եւ նրան զրկում հայ-թուրքական սահմանի բացումը միջազգային ասպարեզում շահարկելու հնարավորությունից՝ ցույց տալով հարաբերությունների հաստատման համար Հայաստանին նախապայմաններ առաջադրելու սնանկությունը, ապա ՀՀ արտգործնախարարը վետոյի սպառնալիքը որպես հակազդեցություն հակադրում էր Թուրքիայի որդեգրած հայկական քաղաքականությանը՝ չեզոքացնելու համար դրա հակահայկական դրսեւորումները:

Տես էջ 2

ԸՆԹԱՑԻԿ

Հարցումների արդյունքը հետեւությունների անհրաժեշտություն է ծնում

Օգոստոսի 8-ի ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների առնչությամբ

ԼՂՀ-ում օգոստոսի 8-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների գործընթացն այս օրերին մտել է ամենաաֆ՝ քարոզչական փուլի մեջ: Անշուշտ, բոլոր համայնքների մեջ առավել ուշագրավը Ստեփանակերտի ընտրություններն են. ո՞վ է լինելու հաջորդ քաղաքապետը:

Ընտրությունների կապակցությամբ Արցախի ժուռնալիստների միությունը նախաձեռնել եւ անց է կացրել հասարակական կարծիքի հարցում:

Հարցման նպատակը ԼՂՀ-ում գործող տեղական ինքնակառավարման համակարգի նկատմամբ հասարակության վերաբերմունքի, բնակչության շրջանում, ինչպես նաեւ առանձին խավերում տիրող տրամադրությունների ուսումնասիրումն էր:

Առաջարկվել է պատասխանել 12 հարցի, որոնք վերաբերում են ժողովրդավարության հասատմանն առնչվող օրենսդրական դաշտի կայացմանը, առկա իրողություններին եւ տեղական ինքնակառավարման մարմինների առաջիկա հերթական ընտրություններին:

Հարցերի պատասխաններն առանձին առանձին ամփոփվել են ըստ հարցվածների բնակության վայրի, սեռի, տարիքի, կրթության, ներկայիս զբաղմունքի եւ կուսակցական պատկանելության:

Հարցմանն ընդհանուր առմամբ մասնակցել է ընտրելու իրավունքով օժտված 299 քաղաքացի, որից 99-ը Ստեփանակերտում, իսկ հանրապետության 5 շրջաններում՝ 40-ական բնակչի ընդգրկումով:

Հարցերն ու պատասխաններն այսպիսին էին:

«Արդյոք լիարժեք է «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ԼՂՀ գործող օրենքը» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 97-ը (32,5%), բացասական՝ 115-ը (38,5%), դժվարացել է պատասխանել 87-ը (29%):

«Կարելի՞ է կայացած համարել ընտրությունների միջոցով ձեւավորվող տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուտը ԼՂՀ-ում» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 90-ը (30.0%), բացասական՝ 138-ը (46.0%), դժվարացել է պատասխանել 71-ը (24.0%):

«ԼՂՀ օրենսդրությամբ հստակորե՞ն են սահմանազատված իշխանության բարձրագույն եւ տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները համայնքների տարածքներում» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 77-ը (26.0%), բացասական՝ 152-ը (51.0%), դժվարացել է պատասխանել 70-ը (23.0%):

«Տեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորման ներկա համակարգը համապատասխանո՞ւմ է ժողովրդավարության սկզբունքներին» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 85-ը (28.0%), բացասական՝ 151-ը (51.0%), դժվարացել է պատասխանել 63-ը (21.0%):

«Կարելի՞ է լիարժեք համարել ավագանու գործունեությունը տեղական ինքնակառավարման գործող համակարգի պայմաններում» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 36-ը (12.0%), բացասական՝ 210-ը (70.0%), դժվարացել է պատասխանել 53-ը (18.0%):

«Եռամյա ժամկետը բավարա՞ր եք համարում ընտրվի տեղական ինքնակառավարման մարմինների համապարփակ գործունեության համար» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 195-ը (65.0%), բացասական՝ 70-ը (24.0%), դժվարացել է պատասխանել 34-ը (11.0%):

«Թափանցիկ եւ արդա՞ր են անցնում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 95-ը (32.0%), բացասական՝ 162-ը (54.0%), դժվարացել է պատասխանել 42-ը (14.0%):

«Էակա՞ն է Ձեր համայնքի ավագանու դերը ներհամայնքային հարցերի լուծման գործում» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 66-ը (22.0%), բացասական՝ 187-ը (63.0%), դժվարացել է պատասխանել 46-ը (15.0%):

«Կարեւո՞ր է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի բարձրագույն կրթական ցենզը» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 246-ը (82.0%), բացասական՝ 31-ը (10.5%), դժվարացել է պատասխանել 22-ը (7.5%):

«Նպատակահարմա՞ր է նույնպես ընտրվի դարձնել շրջանային վարչակազմի ղեկավարի բնակչության շրջանում, ինչպես նաեւ առանձին խավերում տիրող տրամադրությունների ուսումնասիրումն էր:

Առաջարկվել է պատասխանել 12 հարցի, որոնք վերաբերում են ժողովրդավարության հասատմանն առնչվող օրենսդրական դաշտի կայացմանը, առկա իրողություններին եւ տեղական ինքնակառավարման մարմինների առաջիկա հերթական ընտրություններին:

Հարցերի պատասխաններն առանձին առանձին ամփոփվել են ըստ հարցվածների բնակության վայրի, սեռի, տարիքի, կրթության, ներկայիս զբաղմունքի եւ կուսակցական պատկանելության:

Հարցմանն ընդհանուր առմամբ մասնակցել է ընտրելու իրավունքով օժտված 299 քաղաքացի, որից 99-ը Ստեփանակերտում, իսկ հանրապետության 5 շրջաններում՝ 40-ական բնակչի ընդգրկումով:

Հարցերն ու պատասխաններն այսպիսին էին:

«Արդյոք լիարժե՞ք է «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ԼՂՀ գործող օրենքը» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 97-ը (32,5%), բացասական՝ 115-ը (38,5%), դժվարացել է պատասխանել 87-ը (29%):

«Կարելի՞ է կայացած համարել ընտրությունների միջոցով ձեւավորվող տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուտը ԼՂՀ-ում» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 90-ը (30.0%), բացասական՝ 138-ը (46.0%), դժվարացել է պատասխանել 71-ը (24.0%):

«ԼՂՀ օրենսդրությամբ հստակորե՞ն են սահմանազատված իշխանության բարձրագույն եւ տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները համայնքների տարածքներում» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 77-ը (26.0%), բացասական՝ 152-ը (51.0%), դժվարացել է պատասխանել 70-ը (23.0%):

«Տեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորման ներկա համակարգը համապատասխանո՞ւմ է ժողովրդավարության սկզբունքներին» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 85-ը (28.0%), բացասական՝ 151-ը (51.0%), դժվարացել է պատասխանել 63-ը (21.0%):

«Կարելի՞ է լիարժեք համարել ավագանու գործունեությունը տեղական ինքնակառավարման գործող համակարգի պայմաններում» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 36-ը (12.0%), բացասական՝ 210-ը (70.0%), դժվարացել է պատասխանել 53-ը (18.0%):

«Եռամյա ժամկետը բավարա՞ր եք համարում ընտրվի տեղական ինքնակառավարման մարմինների համապարփակ գործունեության համար» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 195-ը (65.0%), բացասական՝ 70-ը (24.0%), դժվարացել է պատասխանել 34-ը (11.0%):

«Թափանցիկ եւ արդա՞ր են անցնում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 95-ը (32.0%), բացասական՝ 162-ը (54.0%), դժվարացել է պատասխանել 42-ը (14.0%):

«Էակա՞ն է Ձեր համայնքի ավագանու դերը ներհամայնքային հարցերի լուծման գործում» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 66-ը (22.0%), բացասական՝ 187-ը (63.0%), դժվարացել է պատասխանել 46-ը (15.0%):

«Կարեւո՞ր է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի բարձրագույն կրթական ցենզը» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 246-ը (82.0%), բացասական՝ 31-ը (10.5%), դժվարացել է պատասխանել 22-ը (7.5%):

«Նպատակահարմա՞ր է նույնպես ընտրվի դարձնել շրջանային վարչակազմի ղեկավարի բնակչության շրջանում, ինչպես նաեւ առանձին խավերում տիրող տրամադրությունների ուսումնասիրումն էր:

Առաջարկվել է պատասխանել 12 հարցի, որոնք վերաբերում են ժողովրդավարության հասատմանն առնչվող օրենսդրական դաշտի կայացմանը, առկա իրողություններին եւ տեղական ինքնակառավարման մարմինների առաջիկա հերթական ընտրություններին:

Հարցերի պատասխաններն առանձին առանձին ամփոփվել են ըստ հարցվածների բնակության վայրի, սեռի, տարիքի, կրթության, ներկայիս զբաղմունքի եւ կուսակցական պատկանելության:

Հարցմանն ընդհանուր առմամբ մասնակցել է ընտրելու իրավունքով օժտված 299 քաղաքացի, որից 99-ը Ստեփանակերտում, իսկ հանրապետության 5 շրջաններում՝ 40-ական բնակչի ընդգրկումով:

Հարցերն ու պատասխաններն այսպիսին էին:

«Արդյոք լիարժե՞ք է «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ԼՂՀ գործող օրենքը» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 97-ը (32,5%), բացասական՝ 115-ը (38,5%), դժվարացել է պատասխանել 87-ը (29%):

«Կարելի՞ է կայացած համարել ընտրությունների միջոցով ձեւավորվող տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուտը ԼՂՀ-ում» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 90-ը (30.0%), բացասական՝ 138-ը (46.0%), դժվարացել է պատասխանել 71-ը (24.0%):

«ԼՂՀ օրենսդրությամբ հստակորե՞ն են սահմանազատված իշխանության բարձրագույն եւ տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները համայնքների տարածքներում» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 77-ը (26.0%), բացասական՝ 152-ը (51.0%), դժվարացել է պատասխանել 70-ը (23.0%):

«Տեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորման ներկա համակարգը համապատասխանո՞ւմ է ժողովրդավարության սկզբունքներին» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 85-ը (28.0%), բացասական՝ 151-ը (51.0%), դժվարացել է պատասխանել 63-ը (21.0%):

«Կարելի՞ է լիարժեք համարել ավագանու գործունեությունը տեղական ինքնակառավարման գործող համակարգի պայմաններում» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 36-ը (12.0%), բացասական՝ 210-ը (70.0%), դժվարացել է պատասխանել 53-ը (18.0%):

«Եռամյա ժամկետը բավարա՞ր եք համարում ընտրվի տեղական ինքնակառավարման մարմինների համապարփակ գործունեության համար» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 195-ը (65.0%), բացասական՝ 70-ը (24.0%), դժվարացել է պատասխանել 34-ը (11.0%):

«Թափանցիկ եւ արդա՞ր են անցնում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 95-ը (32.0%), բացասական՝ 162-ը (54.0%), դժվարացել է պատասխանել 42-ը (14.0%):

«Էակա՞ն է Ձեր համայնքի ավագանու դերը ներհամայնքային հարցերի լուծման գործում» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 66-ը (22.0%), բացասական՝ 187-ը (63.0%), դժվարացել է պատասխանել 46-ը (15.0%):

«Կարեւո՞ր է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի բարձրագույն կրթական ցենզը» հարցին դրական է պատասխանել հարցվածներից 246-ը (82.0%), բացասական՝ 31-ը (10.5%), դժվարացել է պատասխանել 22-ը (7.5%):

«Նպատակահարմա՞ր է նույնպես ընտրվի դարձնել շրջանային վարչակազմի ղեկավարի

Ստեփանակերտ

ՈԱԿ-ՀՅԴ միասեղ բողոքի ցույց թուրք վարչապետ Էրդողանի Ֆրանսա այցելության առթիվ

Սկիզբը էջ 1

«Դեկտեմբեր 2004-ին, Ֆրանսայի նախագահը վճռական կարծիք պիտի տայ այս անդամակցության բանակցութիւններուն գծով: Այդ թուականն առաջ Թուրքիան կը ձեռնարկէ լայնածիր քարոզչութեան արշաւի մը, նպատակ ունենալով ցոյց տալ, թէ կը յարգէ Կոպենհագենի չափանիշները, բայց մէկդի դնելով Եւրոխորհրդարանի յունիս 18, 1987-ի որոշման նախապայմանները Հայկական ցեղասպանութեան մասին»:

«...Ընենք այնպէս, որ Ֆրանսան յիշեցնէ պրն Էրդողանին մեր մէկ ու կէս միլիոն նահատակները եւ միասնաբար ո՛չ ըսենք Ռեջեփ Թայիփ Էրդողանի Թուրքիոյ, որ կը շարունակէ ուրանալ Հայկական ցեղասպանութիւնը»:

Յուլիս 20-ի առաւօտեան տեղի ունեցաւ ՈԱԿ-ՀՅԴ միասեղ մամլոյ ասուլիսը Փարիզի մամլոյ ակումբին մէջ, ուր եկած էին աւելի քան 15 մամլոյ եւ հեռատեսութեանց գործակալութիւններու թղթակիցներ: Յանուն ՀՅԴ Արեւմտեան Եւրոպայի կեդրոնական կոմիտէին խօսք առաւ ատենապետ Մուրադ Փափազեան, որ մատնանշեց. «Առանց Հայկական ցեղասպանութեան ճանաչման Թուրքիան չի կրնար նստիլ բանակցութիւններու. այս նախապայման է»: Յանուն ՈԱԿ Ֆրանսայի շրջանային վարչութեան խօսեցաւ ՈԱԿ կեդրոնական վարչութեան անդամ ընկեր Վարուժան Սիրապեանը, որ շեշտեց, թէ Թուրքիան պատրաստ չէ տակաւին հասնելու ռազմավարական այն տարական սկզբունքներուն, որոնք արդէն կը կիրարկուին եւրոպական ընկերութեան մէջ:

Նոյն օրը Թուրքիոյ վարչապետը նոյն ակումբին մէջ ունեցաւ իր մամլոյ ասուլիսը: Նոյն պահուն, Փարիզի «Մարդկային իրաւանց» հրապարակին վրայ (Place du Trocadero), աւելի քան 3000 հայորդիներ ընթացք տալով աւանդական մեր զոյգ կուսակցութեանց կոչին, ներկայ գտնուեցան բողոքի այս ցոյցին: Ցուցապխակներով անոնք յայտնեցին իրենց բողոքը՝ Թուրքիան մաս կազմելու Եւրոպային: Արտայայտուեցան տեսակէտներ, որոնք գրաւեցին ֆրանսացի հանրային կարծիքին ուշադրութեան:

Յուլիս 21-ին, չորեքշաբթի օր, ընկեր Վ. Սիրապեան եւ Մ. Փափազեան ունեցան մասնաւոր հանդիպում նախագահ Շիրակի խորհրդականներուն հետ, աւելի մօտէն պարզելու համար այն մեծ աղէտը, որ կրնայ հասնիլ Եւրոպայի համայնքին՝ Թուրքիոյ անդամակցութեամբ:

ՈԱԿ ՄԱՍԼՈՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԻՒԱՆ

Վրաստանի համար շահավետ կլիներ Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթուղու գործարկումը

Սկիզբը էջ 1

Աբխազական երկաթուղու բացման, շահագործման հնարավորության առումով Ժվանիան Հայաստանի համար նոր բան չասաց, կրկնելով, որ այդ հարցն ուղղակիորեն կապված է աբխազական հակամարտության կարգավորման հետ:

«Մեր դիրքորոշումը շատ կառուցողական է, անշուշտ, մենք ենթարկում ենք Աբխազիայով երկաթուղային հաղորդակցության խնդիրը, բայց դա պայմանավորված է աբխազական հակամարտության կարգավորման հարցում առաջընթացով, առաջին հերթին՝ Գալիի շրջան փախստականների վերադարձով», ասաց Ժվանիան:

Հայաստանի եւ Վրաստանի վարչապետները քննարկել են նաեւ Իրանից Հայաստանով դեպի Վրաստան գազի տարանցման հնարավորությունը: «Ես Վրաստանի կառավարության անունից արտահայտեցի հետաքրքրություն Իրան-Հայաստան գազամուղի «երկարացման» առումով, այն հաշվով, որ հնարավոր լիներ այդ խողովակաշարով գազի առաքումը (Վրաստան)», ասաց Ժվանիան:

Իր կողմից Հայաստանը շահագրգռված է Վրաստանում նոր թափ ստացած սեփականաշնորհումով: Մարգարյանն ասաց, որ հայ ձեռնարկիչները պատրաստ են մասնակցելու Վրաստանում ընթացող սեփականաշնորհման գործընթացին:

«Մենք պայմանավորվել ենք, որ կստանանք այն օբյեկտների ցուցակը, որոնք պետք է սեփականաշնորհվեն: Մենք այսօր պայմանավորվեցինք ստեղծել հայ-վրացական գործարար ասոցիացիա, որը նույնպես զբաղվելու է այդ հարցերով (Վրաստանում թափ առած սեփականաշնորհվող օբյեկտներով- խմբ.)», ասաց Հայաստանի վարչապետը:

Հավելենք, որ կիրակի երեկոյան Զուրաբ Ժվանիան եւ Անդրանիկ Մարգարյանը ընթրեցին «Պուրիս Սախլի» ռեստորանում: Ընթրիին անակնկալ միացավ Միխայիլ Սաակաշվիլին, հավանաբար այդ ձեւով ցույց տալով իր հատուկ վերաբերմունքը Հայաստանի հանդեպ: Սակայն, մյուս կողմից, Թբիլիսիի նոր իշխանությունների տարածաշրջանային քաղաքականության որոշ ուղղություններ կարծես թե հակասում են Հայաստանի շահերին: Այս մասին՝ այլ առիթով:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԵՐԵՐ

«Հայաստանը դինամիկ արտաքին քաղաքականություն է վարում եւ արձանագրում հաջողություններ»

Սկիզբը էջ 1

Թերեւս այդ առումով հատկանշական էր Անկարայում գործող Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի կովկասյան բաժնի աշխատակից Հաթեմ Ջաբարլու «Հաբերանալիզի» հուլիսի 13-ի համարում հրապարակված հոդվածը, որտեղ հեղինակը մատնանշել էր. «Որքան էլ Հարավային Կովկասում բնակչությամբ եւ տարածքով Հայաստանը փոքրիկ պետություն է՝ տնտեսական լուրջ խնդիրներով, այնուամենայնիվ, ավելի դինամիկ արտաքին քաղաքականություն է վարում եւ հասնում է հաջողության հատկապես Թուրքիայի ու Ադրբեջանի դեմ»:

Նույն Ջաբարլուն միեւնույն բաժնի վարիչ Յաշար Քալաֆաթի հետ «Հաբերանալիզի» հուլիսի 24-ի համարում հրապարակել է «Թուրքիա-Հայաստան հարաբերությունների գնահատականը հոգեբանական տեսանկյունից» հոդվածը, որի տարբերությունը նախորդից պայմանավորում են ոչ թե գնահատականները, այլ ծամծմված զրպարտությունները, որոնք հասցեագրվում են Հայաստանին:

Քալաֆաթն ու Ջաբարլուն նշում են, որ Թուրքիայի նկատմամբ հայերի դիրքորոշումը 20-րդ դարի սկզբներից անփոփոխ է մնացել, թե նրանք 1991 թ. անկախության հռչակագրի 11-րդ հոդվածով օրախնդիր են դարձրել ցեղասպանության հարցը, ավելին՝ Հայ դատով նախատեսվող «Ծովից ծով Հայաստան» ծրագիրը կյանքի կոչելու համար իբր հողային պահանջ են ներկայացնում Ադրբեջանին, Թուրքիային, Վրաստանին, Իրանին եւ անկախ ցամաքային ուղիղ կապի բացակայությունից՝ նաեւ Ռուսաստանին:

Ըստ համահեղինակների, Հայաստանի անկախության հռչակումից հետո Թուրքիան նրա հետ տնտեսական եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար բարի կամք է դրսեւորել, սակայն Հայաստանը դրան պատասխանել է «այսպես կոչված ցեղասպանության քարոզչությունը շարունակելով, չի ճանաչում Թուրքիայի տարածքային ամբողջականությունը եւ շարունակում է աշխատանքները Կարսի պայմանագիրը չեղյալ հայտարարելու ուղղությամբ»: Այս ամենը, նրանց կարծիքով, սպիտել է Թուրքիային, որ 1993 թ. ապրիլին փակի Կարս-Գյումրի սահմանադուռը:

Այնուհետեւ վերոհիշյալ հեղինակներն անդրադառնում են Թուրքիայի հայկական սահմանի բացման օգտին թուրքական կենտրոնական թերթերի հրապարակումներին, ինչպես նաեւ այդ նույն նպատակով կարսեցիների սոնրագրահավաքին եւ արդյունքների հրապարակման համար վերջերս Կարսում հրավիրված հանրահավաքին՝ պայմանավորելով հրապարակումներն ու հանրահավաքը թուրքահայ համայնքի եւ Պոլսո հայոց պատրիարքարանի մտացածին ազդեցությամբ, թե իբր վերջիններս ուղղորդում են թուրքական կենտրոնական թերթերին: Քալաֆաթն ու Ջաբարլուն միաժամանակ չեն մոռանում մեղադրել նաեւ Թուրք-հայ գործարար միությանը, այդ թվում «Ակօսի» գլխավոր խմբագրին՝ ընդգծելով, որ Հրանտ Դինքը շրջանցում է Հայաստանի ցեղասպանության քարոզարշավը, 1921 թ. Կարսի պայմանագիրը չեղյալ հայտարարելու ձգտումներն ու Թուրքիայի տարածքային ամբողջականության նկատմամբ ճմահաճ վերաբերմունքը եւ հայ-թուրքական սահմանի բացման հարցը հանգեցնում Մեծամորի աստմակայանի փակմանը:

Քալաֆաթն ու Ջաբարլուն թուրքական իշխանություններին խելք են սովորեցնում՝ հասկացնել միջազգային հանրությանը, որ անհնարին է բացել այն սահմանը, ինչը հայերը չեն ճանաչում: Նրանց կարծիքով, Թուրքիայի արեւելյան սահմանների նկատմամբ հավակնություն ունեցող Հայաստանի համար դա ոչ թե թուրք-հայկական սահման է, այլ բռնազավթման հետեւանքով Արեւելյան եւ Արեւմտյան Հայաստանները տարանջատող սահմանադուռ:

Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնը, որտեղ աշխատում են Քալաֆաթն ու Ջաբարլուն, պետական կառույց է: Հետեւաբար նրանց հոդվածն էլ պետք է համարվի Հայաստանի նկատմամբ որդեգրած քաղաքականության հարցում Թուրքիայի հետեւողականության վկայություն: Ինչ վերաբերում է Հայաստանին հասցեագրված զրպարտանքներին, ապա դրանք էլ պետք է վերագրել մեր հանրապետության վարած «ավելի դինամիկ արտաքին քաղաքականությանն ու արձանագրած հաջողություններին»: Այն առումով, որ երբ այդպիսի քաղաքականությունը հաջողություններ է արձանագրում, ինչի մասին վկայել է Ջաբարլուն, ապա **զրպարտությունը զրպարտողի համար դառնում է այդ քաղաքականությանը հակադրվելու միակ միջոցը:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ / հեռ. 581841
Համակարգչային ծառայություն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական՝ թէ մասնակի արտատպումները տրագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են
համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԸՆԹԱՑԻԿ

Ուսումնասիրվում է համաժողովների վիճակը

«Այրարատում այս պահին լայն ծավալով ընթանում են ասֆալտապատման աշխատանքներ: Առ այսօր արդեն ընդհանուր առմամբ 177 հզ. 274 քմ համայնքային նշանակության փողոցներ բարեկարգվել եւ ասֆալտապատվել են», այսպիսի տեղեկությամբ սկսեց ասուլիսը Երեւանի փոխքաղաքապետ Վանո Վարդանյանը: Փողոցների բարեկարգման ծախսերը, ըստ կարգավիճակի բաշխվել են քաղաքապետարանի եւ համայնքների միջեւ: Համայնքային նշանակության փողոցների ծախսը հոգում են համայնքները, քաղաքային նշանակությանը՝ քաղաքապետարանը: Վնասված, խորդուբորդ փողոցները համայնքներում շարունակում են գերակշռող մնալ, եւ ըստ փոխքաղաքապետի, դրանք նորոգելու ծրագրերը օրախնդիր են քաղաքային իշխանության համար:

Երեւանի մյուս ցավոտ հարցը՝ մութ ու խավար փողոցները լուսավորելը, եւս կամաց-կամաց տեղաշարժվում է:

Առաջին կիսամյակի տվյալներով, 57 կմ երկարությամբ 34 փողոցներում Երքաղլույսն արդեն ավարտել է անելիքը, երկրորդ կիսամյակի (23 կմ երկարությամբ 19 փողոցներում) աշխատանքները դեռ ընթացքի մեջ են: Լուսավորվել են նաեւ 22 արձաններ ու 12 շենքեր: Փոխքաղաքապետը հայտնեց, որ շահագործման են հանձնվել նաեւ 20 ջրային կառույցներ, որոնցից 13-ը շատրվաններ ու ջրավազաններ են: Վերականգնվել են շատրվաններ հանրապետության հարթակում եւ օրակածեւ զբոսայգու մի հատվածում:

Անդրադառնալով եղանակները տաքանալու հետ խիստ հաճախացած հրդեհներին, Վանո Վարդանյանը նշեց, որ չնայած համայնքների ձեռնարկած միջոցառումներին, հրդեհները չեն պակասում: Հանձնարարվել է արագացնել խոտհնձի աշխատանքները, քանի որ ամենից հաճախ ու հեշտությամբ չոր խոտն է կրակի բռնկման պատճառ դառնում:

Երեւանում, համենայն դեպս, չեն արձանագրվում այնպիսի շոգեր, որոնք իրապես հրդեհի սպառնալիք առաջացնեին: Անկասկած, որեւէ կանաչ տարածքում հողակտոր հայթայթելու համար միտումնավոր հրդեհներ առաջացնելու մեխանիզմը դեռ կենսունակ է:

Բազմաբնակարանների բակերը համաժողովների տնօրինությանը հանձնելու հեռանկարը քաղաքային իշխանություններին պարտադրում է ուշացած ուշադրություն արժանացնել նաեւ համաժողովներին: Սրանց վիճակը միշտ էլ, մեղմ ասած, բավարար չի եղել, բայց թե կոնկրետ որ համաժողովում ինչ է կատարվում, հայտնի չէ ոչ քաղաքային, ոչ համայնքային իշխանություններին: Այժմ լրացուցիչ ուսումնասիրություններ, համաժողովներում տիրող վիճակի յուրաքանչյուր գույգագումներ են իրականացվում:

Վանո Վարդանյանն ասաց, որ վարչապետի որոշմամբ ստեղծվել է հանձնաժողով, որը պիտի զբաղվի համաժողովների առողջացման խնդրով: Ճարտոնական դրամաշնորհի օգնությամբ վերջինս իրականացնելու է խորհրդատվական կենտրոնի ստեղծման, օրենսդրական դաշտի կարգավորման եւ ֆինանսական աղբյուրների հայթայթման ծրագրերը, համագործակցելով, իհարկե, քաղաքապետարանի ու համայնքների համապատասխան կառույցների եւ ոլորտակիրեն համաժողովների ղեկավարների հետ: Համաժողովների քանակը, չնայած նախորդների անհաջող փորձին, մարտի 1-ից հուլիսի 1-ը 14-ով ավելացել է: Համաժողովների մեջ են մտել եւս 91 շենքեր: Այսօրվա դրությամբ Երեւանում հաշվվում են 398 համաժողովներ, դրանց մեջ ներառված են 4204 շենքեր: Մեծ մասը կայացել է միայն թղթի վրա, իրականում ոչ հնարավորություններ, ոչ էլ որեւէ ծրագիր ունեն շենքերի պահպանման ու բնակիչների տարաբնույթ հոգսերը հոգալու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է վթարային շենքերի՝ տարուց տարի փոխանցվող խնդրին, արդա անցած կիսամյակում, փոխքաղաքապետի խոստովանությամբ, «իսկապես թերացում է եղել»: Պատճառը՝ «փաստաթղթային ձգձգումների հետեւանքով հետ են ընկել նաեւ շինարարական աշխատանքները»: Դա հատկապես վերաբերում է Արցախի 8/2, 8/3, Սեբաստիայի 18, 26 շենքերին: Ինչպես միշտ, ֆինանսական խնդիրների ճշման անհրաժեշտություն էլ կա:

Ի դեպ, գրեթե ամեն երկուշաբթի, խորհրդակցությունից առաջ քաղաքապետարանի մերձակա հատվածում արդեն խմբված են լինում վթարային շենքերի բողոքավոր բնակիչները:

Հոկտեմբերի 13-ից 16-ը մայրաքաղաքում անցկացվելու է Երեբունի-Երեւան տոնակատարությունը, եւ քաղաքային իշխանությունները, ըստ փոխքաղաքապետի, տոնակատարությունը հանգիստ խղճով դիմավորելու համար պիտի հասցնեն գոնե մեղմացնել այս բոլոր սղված խնդիրները:

ԿԱՐԻՆԵ ՂԱՌԻԵԼՅԱՆ



ԴԱՏԱՐԱՆ

Ինչպիսի՞ն կլինի հանգուցալուծումը

Վերաքննիչ դատարանը նախորդ նիստում լսել էր Լավրենտի Կիրակոսյանի ցուցմունքները, իսկ երեկվա նիստում անդրադարձավ վերջինիս դեմ հարուցված քրեական գործի դատավարության դատական արձանագրություններին ու փաստաթղթերին: Արձանագրությունների հրապարակմանը հաջորդեցին դատապաշտպան Վարդան Զուտնաչյանի փաստարկները ու կասկածները դրանց առնչությամբ: Չորազաբանված օպերատիվ տվյալների հիման վրա կատարվել է խուզարկություն Կիրակոսյանի տանը եւ կազմվել արձանագրություն առանց հայտնաբերված եւ առգրավված իրերի մանրամասն նկարագրության եւ Լավրենտի Կիրակոսյանի հայտարարությունների:

Հայտնաբերված բուսական ծագման 59,3 գ չորացրած նյութից փորձանմուշ վերցնելու արձանագրությունն էլ ստորագրել են այդ պահին ներկա չգտնված երկու ընթերականներ: Ամբաստանյալի մեզը դատափորձաբանության ենթարկած մասնագետը պատասխանել է իրեն ուղղված 3 հարցերից մեկին՝ փաստելով, որ մեզում առկա է կանեփի հումից պատրաստված թմրամիջոց: Անտեսվել են թմրամիջոցի օգտագործման վաղեմության եւ չափաքանակի վերաբերյալ հարցերը: Դատապաշտպանը համոզված է, որ այդ հարցերի պատասխանները չեն տրվել դիտավորությամբ: Թմրամիջոցի օգտագործման վաղեմությունը չէր անցնելու տասը օրից, իսկ այդ ընթացքում Կիրակոսյանը գտնվել է վարչական կալանքի տակ: Բաղրամյանի Քառակերտի (այնտեղ է Լավրենտի Կիրակոսյանը բնակվում) գյուղապետը բարեխղճորեն տրամադրել է ամբաստանյալի երկու հարաբերժ բնութագիր, որոնցից մեկը հագեցուն է հակասական տեղեկություններով. «Ապրում է մի տեսակ մեկուսացած, հասարակական կյանքին չի մասնակցում: Զարմանալիորեն վայելում է գյուղացիների հարգանքը: Առնչվում է կասկածելի մարդկանց հետ», մյուսում Կիրակոսյանը ներկայացվում է հասարակական կյանքի ակտիվիստ, հայրենասեր, ինտերնացիոնալիստ, լավ մասնագետ, հարգանքի արժանի անձնավորություն, ինչը փաստվում է 600 համագյուղացիների ստորագրություններով:

Դատապաշտպան Վարդան Զուտնաչյանը կարծիք հայտնեց, որ իր պաշտպանյալի դեմ մեղադրանք է հարուցվել սարքովի փաստաթղթերի հիմքով եւ պարզաբանումների համար միջնորդեց դատարան հրավիրել Արտաշատի մարզային պոլիկլինիկայի գլխավոր բժշկին եւ այն բուժքրոջը, ովքեր առաջին օգնությունն են ցույց տվել ամբաստանյալին, այն ընթերականներին, ովքեր ստորագրել են խուզարկության արձանագրությունը, փորձագետ Սվետլանա Մինասյանին, որը կատարել է տոքսիկոքիմիական զննությունը: Դատարանը բավարարեց միջնորդություններից վերջինը միայն: Մերժվեց նաեւ ամբաստանյալի Բաղրամյանի ոստիկանության այն աշխատակցին դատարան հրավիրելու միջնորդությունը, որը մասնակցել է առաջին օգնություն տրամադրելուն: Դատարանը աշխատանքը կշարունակի օգոստոսի 2-ին:

ՆԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Անցած շաբաթ Երեւանում լույս աշխարհ է եկել 102 երեխա

Ինչպես տեղեկանում ենք «Մեդինֆորմից», անցած շաբաթ մոր եւ մանկան առողջության պահպանման ԳՀ կենտրոնում ծնվել է 38 երեխա՝ 20 տղա եւ 18 աղջիկ: Շաբաթվա ամենածանր երեխան 4 կգ 300 գրամ է, 55 սմ հասակով: Ամենաթեթեւ աղջիկն ունեցել է 2 կգ 500 գրամ քաշ, 47 սմ հասակ:

«Մալաթիա» ԲԿ-ում ծնվել է 20 երեխա՝ 14 աղջիկ եւ 6 տղա: Ամենածանր աղջիկը 4 կգ է, 54 սմ հասակով, ամենաթեթեւ քաշով տղան 2 կգ 150 գրամ է եւ ունեցել է 44 սմ հասակ:

«Երեբունի» ԲԿ-ում ծնվել է 44 երեխա՝ 30 տղա եւ 14 աղջիկ: Ամենածանր տղան կշռել է 4 կգ 200 գ, 52 սմ հասակով, իսկ ամենաթեթեւը՝ 2 կգ 300 գ, 46 սմ հասակով:

Մ. Մ.

Տնօրենն ազատվել է աշխատանքից

«Ազգի» ուրբաթ օրվա հուլիսի 23-ի համարում Գյումրու մի խումբ բնակիչների բողոքի նամակն էինք հրապարակել նույն քաղաքի թիվ 37 դպրոցի տնօրեն Արթուր Սիմոնյանի ու կրթարանում նրա հաստատած բարքերի մասին: Երեկ, «Չխղճա՛մ, որ ինձ չխղճան» վերնագրով նյութի հրապարակումից ընդամենը 3 օր հետո ՀՀ կառավարության համապատասխան վարչությունից մեզ գանգահարեցին եւ տեղեկացրին, որ Շիրակի մարզպետի 2004 թ. հուլիսի 8-ի թիվ 138 որոշմամբ տնօրեն Արթուր Սիմոնյանն արդեն ազատված է եղել իր պաշտոնից:

ԱՆՇԱՐԺՍՄԱՐ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կոնկրետ դրսեւորում մաքսային համակարգում

Խստական մոտեցում «Ռոյալ Արմենիա» ընկերության նկատմամբ

Սուրճի ներմուծմամբ եւ մշակմամբ զբաղվող «Ռոյալ Արմենիա» ընկերության նկատմամբ մաքսային մարմինները դրսեւորում են խստական մոտեցում, ինչի պատճառը կոռուպցիոն երեւույթների առկայությունն է մաքսային մարմիններում: Երեկ այս մասին հայտարարեցին ընկերության խորհրդի նախագահ Գագիկ Հակոբյանը, տնօրեն Արամ Ղազարյանը եւ իրավաբան Գեւորգ Մինասյանը: Խնդրի մանրամասները ներկայացնելով, վերջինս նշեց, որ մաքսավորները, սկսած 2003 թ. գարնանից, իրենց ընկերության ներկրած սուրճի մաքսային արժեքը սահմանում են նույն գործունեությունն իրականացնող մյուս տնտեսվարողների համեմատ կրկնակի բարձր: Մինչդեռ ներմուծվում է նույն մատակարարից ձեռք բերված նույն տեսակի սուրճը: Այդ սուրճի 1 կգ-ի համար «Ռոյալ Արմենիայից» պահանջում են 1,2, իսկ վերջին անգամ նաեւ 1,8 դոլար, մյուս ներմուծողներից՝ 0,7-0,9 դոլար:

Հիշյալ փաստերի առնչությամբ ընկերությունը դիմել է դատական ատյաններին, եւ ՀՀ տնտեսական դատարանի եւ վճռաբեկ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռներով մաքսային մարմինների այս գործելակերպը ճանաչվել է անօրինական եւ պարտավորեցրել բացառել նման գործելակերպը: Այդուհանդերձ, դատարանի որոշումները չեն կատարվում: Այդ առնչությամբ ընկերությունը երկու անգամ դիմել է Արարատյան մաքսատուն, որտեղից պատասխանել են, որ պետք է դիմեն մաքսային պետական կոմիտե: Դա էլ է արվել, բայց ապարդյուն: Մաքսային մարմինները շարունակում են նույն գործելաոճը, փաստորեն արհամարհելով դատարանի վճիռը: Ընկերության ներկայացուցիչներն իրենց դժգոհությունը հայտնեցին նաեւ դատական ակտերի հարկադիր ծառայության աշխատանքից, որը չի կատարում իր պարտականությունները եւ չի պարտավորեցնում մաքսային կոմիտեին կատարել դատարանի վճիռները: Սակայն «Ռոյալ Արմենիան» որոշել է տեղի չտալ, չնայած ստացած նոր ապրանքախումբն արդեն 14 օր կալանել է մաքսային կոմիտեն:

«Հայաստանի մաքսային մարմինների պատասխանատու անձանց ապօրինությունների դեմ» բողոքով ընկերության ղեկավարությունը դիմել է երկրի նախագահին, վարչապետին, մի շարք նախարարների, տնտեսական մրցակցության հանձնաժողովին: Ընկերության իրավաբանը հուսով է, որ այդ բողոքը կհասնի հասցեատերերին, քանի որ նախկին դիմումը նրանց չէր հասել:

Գագիկ Հակոբյանը նշեց, որ իրենք մաքսային կոմիտեին խնդրել են բացատրել՝ մաքսային արժեքների տարբերության պատճառը, բայց պատասխան չեն ստացել: «Ազգի» հարցին, թե ինչո՞ւ հանկարծ 2003 թ. գարնանից մաքսավորները սկսեցին ընկերության հանդեպ նման վերաբերմունք ցուցաբերել, «Ռոյալ Արմենիայի» խորհրդի նախագահը պատասխանեց, որ այդ «գրպանային համակարգը» սկսել է ձեւավորվել այն պահից, երբ եկան նոր մարդիկ եւ սահմանեցին խաղի նոր կանոններ: Ըստ այդ կանոնների, մաքսայինները պահանջում են իրենց որոշես կաշառք տալ ապրանքի ավելացված արժեքի 20 տոկոսի կեսը: Այսինքն, 1 կգ-ի համար 1,2 դոլարի փոխարեն սահմանելով 0,5 դոլար մաքսային արժեք, գործարարը մաքսայինին պետք է մուծի 0,7 դոլար կազմող տարբերության 20 տոկոսի (14 ցենտ) կեսը՝ 7 ցենտ: Գագիկ Հակոբյանի հավաստմամբ, եթե իրենք պայմանավորվեին Խաչատրյան, Ֆահրադյան ազգանուններով մաքսային կոմիտեի բարձրաստիճան պաշտոնյաների հետ, ապա որեւէ խնդիր չէին ունենա: Սակայն վճռել են գնալ մինչեւ վերջ, քանի որ մաքսավորները սպիտված են լինելու կատարել օրինական ուժի մեջ մտած դատավճռի պահանջները: Ի դեպ, մեր մյուս հարցին, թե ընկերությունը դիմե՞լ է տնտեսական մրցակցության պաշտոնության հանձնաժողով, Գեւորգ Մինասյանը պատասխանեց, որ դիմել են, եւ հանձնաժողովը երեք ժամ քննարկելով այդ հարցը, որոշել է, որ անբարեխիղճ մրցակցություն չի դրսեւորվել:

Վերոնշյալին մնում է միայն ավելացնել, որ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի՞ փոխհարաբերություններ են ունեցել «Ռոյալ Արմենիան» եւ մաքսային կոմիտեն մինչեւ 2003 թ. գարունը, որ մաքսային կոմիտեի նախագահը չի դադարում խոսել համակարգում նոր տեխնոլոգիաների ներդրման եւ կոռուպցիայի հնարավորությունների նվազեցման մասին, մաքսային մարմիններում կոռուպցիայի առկայությունը երբեւէ որեւէ մեկի կասկածը չի հարուցել: Դրա անուղղակի ապացույցն այս կառույցի չինովնիկների արտասահմանյան թանկարժեք ավտոմեքենաներն են, որոնք նրանք հաստատես իրենց աշխատավարձերով չեն գնել:

ԱԲՈՒ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Անդրադարձ

Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպան Ջոն Օրդուեյն իր պաշտոնավարության ավարտից երկու օր առաջ հրաժեշտի մամուլի ասուլիս կազմակերպեց եւ գովեստի խոսքեր շռայլեց, մեջբերում ենք. «Այս գեղեցիկ բնության մեջ ապրող մարդկանց բարության մասին»:

Ասուլիսը լուսաբանող մի քանի տասնյակ հայ լրագրողները հիմնականում իրենց հարցակումներում կարեւորեցին Օրդուեյի սրտառուչ հայերեն խոսքը: Սակայն ամերիկացի դեսպանը հայերին գովելու հետ մի քանի հայտարարություններ արեց, որոնք ամենեւին կապ չունեն սիրո հետ, այլ արտահայտում են տվյալ երկրի, այս պարագայում՝ Ս. Նահանգների վերաբերմունքը:

Սովորաբար ամերիկացի դիվանագետներն իրենց հրապարակային ելույթներում ղարաբաղյան հարցի մասին խոսելիս փորձում են հավասարակշռություն պահպանել: Այս առումով դեսպան Օրդուեյը բացառություն չէ: Իր ասուլիսում պատասխանելով լրագրողներից մեկի հարցին, Օրդուեյը տարօրինակ չհամարեց Մինսկի խմբի գործունեությունից Ադրբեջանի կողմից հնչող դժգոհությունների փաստը: Օրդուեյը նաեւ հավելեց. «Դժգոհություն միշտ էլ արտահայտվել է երկու կողմից»: Թե ինչ ձեւով է արտահայտվում կամ արտահայտվել Հայաստանի՝ Մինսկի խմբի հանդեպ դժգոհությունը, դեսպանը չի մանրամասնել:

Տեղին է նշել, որ Հայաստանն ըստ էության Մինսկի խմբի գործունեությունից երբեւէ լուրջ դժգոհություն չի արտահայտել, ի տարբերություն Ադրբեջանի, որը վերջին մի քանի տարիներին ոչ միայն դժգոհում, այլեւ ակնհայտորեն փորձում է վարկաբեկել ԵԱՀԿ Մինսկի խմբի գործադրած ջանքերը ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում: Առաջին անգամ Մինսկի խումբը հակամարտության երեք կողմերին գրավոր առաջարկ ներկայացրեց 1997 թվականի հուլիսին: «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համապարփակ համաձայնագիրը», որն այլ կերպ անվանվում էր փաթեթային տարբերակ, ընդունեցին Ադրբեջանն ու Հայաստանը, իսկ Ղարաբաղը մերժեց:

Նույն տարվա դեկտեմբերին Մինսկի խումբը նոր փուլային տարբերակ. «Ղարաբաղյան զինված հակամարտության դադարեցման համաձայնագիր», կրկին Ադրբեջանն ու Հայաստանը համաձայնություն տվեցին, Ղարաբաղը մերժեց:

1998 թվականի նոյեմբերին Մինսկի խումբը նոր առաջարկ բերեց՝ «Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների մասին» կամ, այսպես կոչված, ընդհանուր պետության բանաձեւը: Այս անգամ առաջարկը մերժեց միայն Ադրբեջանը, իսկ Հայաստանն ու Ղարաբաղը, թեեւ վերապահումներով, համաձայնություն տվեցին:

Չորրորդ առաջարկությունը կոչվում էր Քի Վեսթի պայմանագիր: Կրկին Հայաստանն ու Ղարաբաղն ընդունեցին միջնորդների առաջարկությունը, մինչդեռ Ադրբեջանը մերժեց:

Փաստորեն, համանախագահների ներկայացրած գրավոր չորս առաջարկները միայն Հայաստանը չի մերժել եւ այս առումով զարմանալի է համանախագահող երկրի՝ Միացյալ Նահանգների դեսպանի հայտարարությունը. «Դժգոհություն միշտ էլ արտահայտվել է երկու կողմից»:

Դեսպանը հավասարության նշան է դնում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ այն դեպքում, երբ Երեւանը երբեք չի մերժում միջնորդների առաջարկները եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահությունը համարում կարգավորման լավագույն ֆորմատը, իսկ Բաքուն՝ սկսած 1998 թ. մերժում է առաջարկները եւ անդադար ճնշադատում Մինսկի խմբին:

Ավելորդ չէ հիշեցնել Օրդուեյի՝ վերջերս արած մեկ այլ հայտարարությունը: Երբ Ռամիլ Սաֆարովը Բուդապեշտում կացնահարեց Գուրգեն Մարգարյանին, Հայաստանում հասարակության տարբեր շերտեր դատապարտեցին ադրբեջանցի սպայի բարբարոսական արարքը, իսկ Ադրբեջանում գրեթե պաշտոնական մակարդակով քաջալերեցին Սաֆարովի «սխրանքը»: Այդ օրերին Օրդուեյը փորձեց հավասարության նշան դնել սպանությունը դատապարտողների եւ մարդասպանին պաշտոնապես պաշտպանողների միջեւ:

Ջոն Օրդուեյը հրաժեշտի մամուլի ասուլիսում հարկ համարեց նաեւ անդրադառնալ Իրան-Հայաստան

Մերը դիվանագիտական կատեգորիա չէ

Անդրադարձ Ջոն Օրդուեյի ասուլիսին

որոնք ամենեւին կապ չունեն սիրո հետ, այլ արտահայտում են տվյալ երկրի, այս պարագայում՝ Ս. Նահանգների վերաբերմունքը:

Սովորաբար ամերիկացի դիվանագետներն իրենց հրապարակային ելույթներում ղարաբաղյան հարցի մասին խոսելիս փորձում են հավասարակշռություն պահպանել: Այս առումով դեսպան Օրդուեյը բացառություն չէ: Իր ասուլիսում պատասխանելով լրագրողներից մեկի հարցին, Օրդուեյը տարօրինակ չհամարեց Մինսկի խմբի գործունեությունից Ադրբեջանի կողմից հնչող դժգոհությունների փաստը: Օրդուեյը նաեւ հավելեց. «Դժգոհություն միշտ էլ արտահայտվել է երկու կողմից»: Թե ինչ ձեւով է արտահայտվում կամ արտահայտվել Հայաստանի՝ Մինսկի խմբի հանդեպ դժգոհությունը, դեսպանը չի մանրամասնել:

Տեղին է նշել, որ Հայաստանն ըստ էության Մինսկի խմբի գործունեությունից երբեւէ լուրջ դժգոհություն չի արտահայտել, ի տարբերություն Ադրբեջանի, որը վերջին մի քանի տարիներին ոչ միայն դժգոհում, այլեւ ակնհայտորեն փորձում է վարկաբեկել ԵԱՀԿ Մինսկի խմբի գործադրած ջանքերը ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում: Առաջին անգամ Մինսկի խումբը հակամարտության երեք կողմերին գրավոր առաջարկ ներկայացրեց 1997 թվականի հուլիսին: «Ղարաբաղյան հակամարտության զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների մասին» կամ, այսպես կոչված, ընդհանուր պետության բանաձեւը: Այս անգամ առաջարկը մերժեց միայն Ադրբեջանը, իսկ Հայաստանն ու Ղարաբաղը, թեեւ վերապահումներով, համաձայնություն տվեցին:

Չորրորդ առաջարկությունը կոչվում էր Քի Վեսթի պայմանագիր: Կրկին Հայաստանն ու Ղարաբաղն ընդունեցին միջնորդների առաջարկությունը, մինչդեռ Ադրբեջանը մերժեց:

Փաստորեն, համանախագահների ներկայացրած գրավոր չորս առաջարկները միայն Հայաստանը չի մերժել եւ այս առումով զարմանալի է համանախագահող երկրի՝ Միացյալ Նահանգների դեսպանի հայտարարությունը. «Դժգոհություն միշտ էլ արտահայտվել է երկու կողմից»:

Դեսպանը հավասարության նշան է դնում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ այն դեպքում, երբ Երեւանը երբեք չի մերժում միջնորդների առաջարկները եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահությունը համարում կարգավորման լավագույն ֆորմատը, իսկ Բաքուն՝ սկսած 1998 թ. մերժում է առաջարկները եւ անդադար ճնշադատում Մինսկի խմբին:

Ավելորդ չէ հիշեցնել Օրդուեյի՝ վերջերս արած մեկ այլ հայտարարությունը: Երբ Ռամիլ Սաֆարովը Բուդապեշտում կացնահարեց Գուրգեն Մարգարյանին, Հայաստանում հասարակության տարբեր շերտեր դատապարտեցին ադրբեջանցի սպայի բարբարոսական արարքը, իսկ Ադրբեջանում գրեթե պաշտոնական մակարդակով քաջալերեցին Սաֆարովի «սխրանքը»: Այդ օրերին Օրդուեյը փորձեց հավասարության նշան դնել սպանությունը դատապարտողների եւ մարդասպանին պաշտպանողների միջեւ:

Ջոն Օրդուեյը հրաժեշտի մամուլի ասուլիսում հարկ համարեց նաեւ անդրադառնալ Իրան-Հայաստան

ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Գերմանական AVA Cooling Systems-ը մուտք է գործում Հայաստան

Ավելի քան 60 տարի շարունակ գերմանացի Հաուկ ընտանիքը, որի արմատները ծյուղավորվել են Լյուսեմբուրգում եւ Բավարիայում, զբաղվել է ավտոմոբիլների, բեռնատարների, տրակտորների, մեքենաների հովացման համակարգերի զարգացմամբ ու զանգվածային արտադրությամբ: 50-ական թթ. Անտոն Վալեցից գնելով AVA ֆիրման (հիմնված՝ 1942 թ.), երիտ Հաուկ Ավագն այն փոխանցեց ինժեներ որդուն՝ Ալբերտին, որն առեւտրական սերտ կապեր ստեղծեց մասնավորապես Մերձավոր Արեւելքի հայ գործարարների հետ՝ նրանց միջոցով ներթափանցելով 300 միլիոնանոց արաբական շուկա:

Բազմապատկելով հարստությունն ու գործարանների շարքը նաեւ Իտալիայում, Դանիայում, Բելգիայում, Բավարիայում, Ֆրանսիայում եւ վերջերս Սլովակիայում՝ Հաուկ 3-րդ սերնդի ներկայացուցիչ Վոլֆգանգը, միշտ երախտապարտ մնալով հայերին, այսօր իր ֆիրմայի ներկայացուցչությունն է նախատեսվում բացել Հայաստանում՝ որպես գործընկեր ընդունելով ավտոտաքսամասերի հայտնի գործարար Համլետ Կարապետյանին, իսկ Կովկասի եւ Ռուսաստանի շուկայի ներկայացուցիչ է նշանակել Համո Մոսկոֆյանին:

Շուտով Երեւանում բացվելու է AVA Cooling Systems-ի արտադրանքների ցուցասրահը, որին անձնապես ներկա է լինելու Վոլֆգանգ Հաուկը Գերմանիայից: AVA-ն արտադրում է ամեն տեսակի ավտոմոբիլների, բեռնակառների, կոմբայնների ռադիատորներ, մեծաղից ու պլաստմասսայից պատրաստված կափարիչներ, կոնդենսատորներ, չորացնող-շոգիացնող սարքեր եւ այլն:

Հուսով ենք, հայաստանյան շուկայում իր արժանի տեղը կգտնի նաեւ այս աշխարհահռչակ արդյունաբերական համակարգի ներկայացուցչությունը:

ԹԱԹՈՒԼԻՑ

ԿԱՇԻՐԵ

«Անգնահատելի պատուհան» դեպի արաբական աշխարհ

«Արեւի» արաբերեն հավելվածը 7 տարեկան է

Տարբեր առիթներով անդրադարձել ենք Կահիրեում լույս տեսնող ՌԱԿ պաշտոնաթերթ «Արեւի» արաբերեն հավելվածին: Ավելորդ չենք համարում հուլիսի 23-ին նշված եգիպտոսի ազգային տոնի առթիվ մի անգամ եւս ընդգծել դրա կարեւորությունն ու դերը ոչ միայն զուտ եգիպտական կամ եգիպտա-հայկական շրջանակներում, այլեւ ամբողջ միջինարեւելյան տարածաշրջանի երկրներում: Այդ մասին են վկայում այն բազմաթիվ նամակները (Լիբանանից, Սիրիայից, Հորդանանից, Սաուդյան Արաբիայից, Քուվեյթից), որոնք տպագրվում են ամսագրում: Դրանցում հանդեսը որակվում է «անգնահատելի մի պատուհան», որը հնարավորություն է ընձեռում ոչ միայն հայ գրողների գրածները թարգմանաբար կարդալ արաբերենով, այլեւ արաբ գրողների ուսումնասիրություններն ընթերցել հայկական մշակույթի եւ հայ-արաբական դարավոր բարեկամական հարաբերությունների վերաբերյալ, մանավանդ որ բազմաթիվ նոռահայտ էջեր, շնորհիվ արաբ մասնագետների տքնաջան եւ հետեւողական աշխատանքի, պարզապես առաջին անգամ են հրատարակվում պարբերականում: Այդ գործում, անկասկած, մեծ է դերը հանդեսի գլխավոր խմբագիր Մոհամեդ Ռիֆաաթ էլ Իմամի, իր գործին անմնացորդ նվիրված մի շնորհալի երիտասարդի, որին Հայաստանի գրողների միությունը պարգեւատրել է գեթ մեկ անգամ հրավիրել Հայաստան:

Արդեն 7 տարի անխափան հրատարակվում է այս ամսագիրը, որի նյութերին թեկուզեւ համառոտակի ծանոթացնելու նպատակով սորուն մեր ընթերցողներին ենք ներկայացնում այս տարվա առաջին 6 համարների բովանդակությունը:

Հունվարյան համարը բացվում է արվեստագետ Հրանտ Քեչիշյանի՝ Ալեքսանդր Սրբենդիարյանի (մահվան 75-ամյակի առթիվ) մասին գրած երկար ուսումնասիրության 2-րդ մասով (առաջինը՝ դեկտեմբերյան համարում): Այնուհետեւ ներկայացված է ամերիկահայ գրող Մայքլ Արլենի «Ճանապարհ դեպի Արարատ» վեպի վերաբերյալ գրաքննադատ Ահմեդ Ղալի Բադաուիի հրապարակման երկրորդ մասը (առաջինը՝ դարձյալ դեկտեմբերյան համարում): Ի դեպ, այդ ուսումնասիրությունը շարունակվում է նաեւ հանդեսի փետրվարյան, մարտյան եւ ապրիլյան համարներում: Դրան հետեւում է ամերիկացի գրող Գրեյս Ռոլանդի հոդվածը Եգիպտոսի ամենահետաքրքրական եւ ամենաէկզոտիկ թաղամասերից մեկի՝ Խան էլ Խալիլի եւ այնտեղ ոսկերչությամբ զբաղվող Միհրան Յազեջյանի մասին:

Փետրվարյան համարը հարգանքի տուրք է մատուցում հոգեւորական Զավեն արք. Չինչինյանի մահվան առնչությամբ, որից հետո ներկայացված է Ահմեդ Աբդել Մոնեիմ էլղադաուիի «Հայաստանը Մարկո Պոլոյի աչքերում» հոդվածը: Վերջում սիրիացի լրագրող Մոհամեդ Էլխադարը գրում է Դամասկոսի համալսարանում սովորող հայ ուսանողների մասին:

Հանդեսի էջերում հանգամանալից ներկայացված են հայկական հարցը, հայոց ցեղասպանությունը: Մարտյան եւ ապրիլյան համարներում ներկայացված են Նեադայի (ՄՆ) համալսարանի սոցիոլոգիայի դասախոսներից Պրեմ Բերբերոլլուի եղեռնի մասին ուսումնասիրության թարգմանությունը Ֆախրի Լաբիբի կողմից, անվանի պատմաբան Վահագն Տատրյանի «Թուրք բժիշկների դերը հայոց ցեղասպանության գործում» հոդվածի հրապարակումը Նահի Սաղիդ Յոուանֆի կողմից եւ «Հայկական դասը: Ընթերցումներ Առաջին աշխարհամարտի տարիների արաբական մամուլի էջերից» խորագրով «Էլ Ռայ էլ Ամ» («հանրային կարծիք»: Բեյրութ, Լիբանան) եւ «Էլ Ադալ» («Արդարություն»: Թանթա, Եգիպտոս) պարբերականների նյութերի՝ վերատպությունը Իբրահիմ Աբուբաքրի մեկնաբանությամբ: Առաջինում բալկանյան պատերազմի ժամանակ օսմանյան բանակում ծառայող հայի, իսկ երկրորդում եղեռնին ականատես անգլիացի սպայի հուշերն են: Այս երկու հրապարակումները հատկապես կարեւոր են, որովհետեւ շատ հաճախ մենք չափազանց մեծ ուշադրություն ենք դարձնում մեր դատը ներկայացնելու անգլիախոս եւ ֆրանսախոս զանգվածներին՝ մոռանալով հսկայական արաբախոս աշխարհը, որը նույնպես այդ ժամանակ արձագանքել է մեր ողբերգությանը, աղատասան տվել վերապրողներին, սակայն որի ներկա սերունդը քիչ կամ համարյա ոչինչ չգիտի այդ մասին: Ի դեպ, ապրիլյան համարում խոսվում է նաեւ ջարդերից մազապուրծ եւ 1924-29 թթ. Եգիպտոս աղատասանած հայ որբերին մեկտեղելու նպատակով հիմնված «Նիշր իսթ հայկական ակումբի» մասին:

Նախորդ՝ մարտյան համարում երաժշտագետ Հրանտ Քեչիշյանը պատմում է դաշնակահար Շահան Արծրունու եւ Ա. Խաչատրյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարությունների մասին: Մարզական բաժինը ներկայացնում է հանուն «Ֆուտբոլի աշխարհի առաջնությունը 2010 թ. Եգիպտոսում անցկացնելու» հանձնախմբի անդամ դոկտ. Վիգեն Ճիզմեճյանին:

Մայիսյան համարը, որի շապիկին Նուբար փաշայի եւ կնոջ՝ Ֆուլիգ Հանըմի նկարն է, շարունակում է ցեղասպանության թեման Դամասկոսի արաբերեն լեզվի ընկերության անդամ Աբդել Մուտին էլ Մուլուտիի «Մաղուֆ էլ Ռուաֆին եւ հայկական ջարդերը», ինչպես նաեւ Կանադայի խորհրդարանի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման մասին հոդվածներով: Իսկ Մենուֆիայի համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետի դասախոս Նաբիլ Հանաֆի Մահմուդը, ուսումնասիրելով Մամլուքյան Եգիպտոսում հայերի դերը, գրել է հոդված հայազգի Աբդել Ռիզաք բեն Աբի-էլ-Ֆարագի մասին:

Վերջին հունիսյան համարում ներկայացված է Բեյրութի ամերիկյան համալսարանի դասախոս դոկտ. Սեդա Դադոյանը, որը կարճատեւ այցելությամբ Եգիպտոս է ժամանել հայ-արաբական հարաբերությունների մասին մի շարք դասախոսություններ կարդալու: Այնուհետեւ Հրանտ Քեչիշյանի հոդվածն է՝ «Խաչատրյանի գործերը Կահիրեի օպերայում» վերնագրով, Սալահ Ահմեդ Հարիդիի «Ալեքսանդրիայի համայնքները օսմանյան դարաշրջանում» գրքի Մագեդ Քամելի վերլուծականը եւ Կահիրեի համալսարանից Ահմեդ Աբդել Մոնեմ էլղադաուիի «Չմոռացվող անուններ» շարքից՝ հայաստանի վալի (արաբական խալիֆայության ժամանակ) Մոհամեդ բեն Մարուան բեն էլհոքմի մասին հոդվածը:

Պատրաստեց
Հ. ՕՍՈՒՄՅԱՆԸ

«Մանկության ընկերները»

Ամոթալի պատմություն Մոսկվայի հայերի կյանքից՝ առեւանգում, խաբեություն, շորթում եւ այդ ամենը ազգային զգացմունքայնությամբ սփռված

Ռուսաստանի հայերի միությանն առընթեր ստեղծվել է վարչարարական դեպարտամենտ, որը հայաստանցի ու տեղի հայերին գործնական օգնություն է ցույց տալիս իրավական բնույթի զանազան խնդիրներ լուծելիս, խորհուրդներ ու հանձնարարականներ է տալիս ձեռնարկատերերին ապօրինի գործողություններից օրինականորեն պաշտպանվելու հարցերում: Ավելի պարզ ասած, դեպարտամենտի աշխատակիցները, որոնք բոլորն էլ իրավապահ մարմինների նախկին աշխատողներ են, կոչված են ապահովելու ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ բիզնեսի ներկայացուցիչների անվտանգությունը:

Դեպարտամենտը գլխավորում է ՌԴ ՆԳՆ պաշտոնաթող գնդապետ Գառնիկ Ոսկանյանը: Նա ՈՀՄ նախագահ Արա Աբրահամյանի խորհրդականն է հիշյալ հարցերով: Ոսկանյանը երկար տարիներ աշխատել է կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի տարածաշրջանային եւ դաշնային ծառայություններում: Աշխատանքի յուրահատկությունը եղել է այն, որ անմիջականորեն զբաղվել է էթնիկական հանցախմբերով, հիանալի գիտի Մոսկվայի ու Ռուսաստանի հայ քրեական աշխարհը ու հայտնի էր դրա նկատմամբ իր անողոք վերաբերմունքով: Ոսկանյանն այսօր թղթին է հանձնում հայազգի քրեականների ու նրանց դեմ պայքարի վերաբերյալ իր, ավա՜ղ, հարուստ հիշողությունները: Նա վերհիշեց մի պատմություն, որը կարծում եմ, իր էկզոտիկ բնույթով կհետաքրքրի ընթերցողներին:

Այս դեպքն իմ մեջ տպավորվել է հագեցած ազգային զգացմունքայնությամբ՝ կեղծ թե իսկական: Երեւանյան այցելություններից մեկի ժամանակ Հայաստանի ՆԳՆ պաշտոնաթող սպաներից մեկն ինձ պատմեց, որ Մոսկվայում քրեական տարրերը առեւանգել են մի հայ բիզնեսմենի, որին մեծ դժվարությամբ ազատել է նրա մանկության ընկերը: Բայց հետաքրքիր է, կարող է մի 30-40 հազար դոլար տրամադրել, բայց ոչ ավելի: Այս հողի վրա էլ նրանց հարաբերությունները փչանում են:

Լսելով այս պատմությունը, ինձ առաջին հերթին զարմացրեց Աշոտի «անշահախնդրությունը». ինչ էլ որ լինի, փոքր գումար չէր նրա առաջարկածը: Եվ առհասարակ, որտեղի՞ց են այդ մեկուկես միլիոնի հասնող թանկարժեք քարերը: Սկսեցի հետաքրքրվել այդ անձով: Անձամբ քրեական անցյալ չուներ: Բայց հսկողություն սահմանելով, բացահայտվեցին որոշ «կապեր»: Ես իմ կասկածները հայտնեցի Կարենին, որ հնարավոր է առեւանգումը կազմակերպել է իր «մանկության ընկերը»: Պետք էր տեսնել Կարենի վրդովմունքը, ավելի ճիշտ՝ զայրույթն իմ «հակամարդկային» ենթադրության կապակցությամբ: Դա լրիվ բացառվում է, գոչեց նա, մի բակում ենք մեծացել, հաց ենք կիսել իրար հետ, ընտանիքներով մոտ ենք, չնայած այստեղ աղջիկ-փեսա ունի, բայց արդեն մի քանի ամիս նա ապրում է իմ մոսկովյան հարկի տակ, կինս ամեն օր սեղան է գցում, շորերն է լվանում, արդուկում: Մի խոսքով, ավելի հարազատ ընկերներ չեն լինում: Նեղսրտած թողեցինք:

Բայց այդ «վիրավորանքը» մի օր տեւեց: Հաջորդ առավոտյան, երբ Կարենը մեքենայով մոտենում է իր գրասենյակին, նրան կանգնեցնում են Աշոտն ու իր փեսան, ծեծում են, բռնի վերցնում նրա մեքենան եւ չքվում, բնավ էլ չնկատելով, որ մեր օվում, բնավ էլ չնկատելով, որ մեր օրերի ինքնաշեմ ավտոմեքենաների վրա են գրանցում տեղի ունեցածը: Պարզ է, որ կալանման գործով հնարավոր չէր լինի մերկացնել նաեւ առեւանգման փաստը: Բայց որոշեցի ռիսկի դիմել: Աշոտի փեսայի բնակարանի խուզարկությունն անսպասելի արդյունք տվեց. հայտնաբերվեցին զենք եւ մեծ քանակությամբ ոսկերչական իրեր ու թանկարժեք քարեր: Հարցաքննության ժամանակ Աշոտը Կարենին հեռակա մեղադրեց բոլոր մարդկային ու անմարդկային հանցանքներին ու անմարդկային հանցանքներում, որ նա հարամ արեց իրենց կեսը, թքեց համատեղ մանկության վրա, ծախեց հավատարիմ ընկերոջը եւ այլն, եւ այլն: Ասում եմ՝ Աշոտ, լավ, էդ բոլորը մի կողմ, պատմի՛ր տեսնենք ո՞նց կազմակերպեցիր այդ «աղերախտի» առեւանգումը: Եվ նորից բուռն վրդովմունքի թատերական մի տեսարան, որ Կարենի նման արվամոլը միայն կարող է այդպես սրիկայաբար զրպարտել իրեն, որ նա թուրքից էլ վատն է, հայ չէ: Հարցնում եմ՝ դու ճանաչո՞ւմ ես այսինչ մարդուն (տալիս եմ այն անունը, որը Կարենը լսել էր իր «գերության» ժամանակ): Կտրականապես հրաժարվում է, մինչդեռ նրա հեռախոսագրքում գրանցված է այդ մարդու համարը: Ի վերջո դեմ եմ տալիս լուսանկար, որտեղ նա Մոսկվայի հյուրանոցներից մեկի սպասասրահում զրուցում է այդ անձի հետ: Հնարում-ասում եմ, որ նա արդեն կալանավորված է եւ կողքի սենյակում իբր ցուցմունքներ է տալիս քո դեմ՝ որպես առեւանգման հեղինակի: Կարմրեց, գունատվեց, տագնապեց ու բռնկվեց, իբր ինքը չէր ուզում, իրեն զորով մեղսակից են դարձրել եւ այլն: Հետո էլ խնդրեց-աղաչեց, որ Կարենին տեղյակ չպահեմ այդ մասին, որ իրեն՝ Հայաստանում, Երեւանում հարգված մարդուն խայտառակ չանեմ, որ իրեն ցանկացած հոդվածով պատժենք, բայց ոչ առեւանգման համար, «Թե չէ, նաչալնիկ, ես ինձ պատտահանից դուրս կգցեմ», ասում է նա: Բացում եմ աշխատասենյակի պատտահանը, բայց Աշոտս աքոռից տոկ չի գալիս: Կրկեսային տեսարան: Նույն գիշերը կալանեցինք նաեւ առեւանգման բոլոր մյուս մասնակիցներին: Ինչն էր ցավ ու դառնություն պատճառում՝ բոլորն էլ հայ էին: Պատկերացրեք իմ վիճակը ռուս գործընկերներիս առջեւ:

Կեսգիշերին կանչեցինք Կարենին՝ եւ «մանկության ընկերները» առերես հանդիպեցին: Նորից նույն «զգացմունքային» տեսարանը: Կարենին հետաքրքրում էր հասկանալ, դաժան էր փաստը: Աստուծու հեղինակը մտերիմ մարդ էր, ընկեր, հայրենակից:

Նավթագողության համար 5 չինացի դատապարտվել է մահապատժի

Չինաստանի դատարանը 5 ագարակատերերի դատապարտել է մահապատժի՝ նրանց մեղադրելով նավթամուղից չզված նավթ գողացած լինելու մեջ: Աստիճանաբար պրես գործակալությունը հաղորդում է, որ 12 ուրիշ ագարակատերեր, որպես այդ գողության հանցակիցներ, դատապարտվել են 3 տարուց մինչեւ ցմահ բանտարկության:

Սինհուա գործակալության տվյալներով, ագարակատերերը ձերբակալվել են դեռ 2002 թ. վերջերին Հենանի նահանգում՝ հենց հանցանքի վայրում, երբ փորձել էին անցք բացել նավթամուղի վրա:

Տզյանցզո քաղաքի ժողովրդական դատարանը եզրակացրել է, որ մեղադրյալ ագարակատերերն ընդհանուր առմամբ գողացել են 450 տոննա անմշակ նավթ, որը գնահատվում է մոտ 118 հազար դոլար: Բացի դրանից, դատարանը որոշել է, որ մեղադրյալները 280 հազար դոլարի վնաս են պատճառել Չինաստանի տնտեսությանը, քանի որ նավթամուղով նավթի տեղափոխումը միաժամանակ ընդհատված է եղել:

Ս. Իվանով. «Ռուսաստանը չի հեռանա Սեւաստոպոլից»

Սեւաստոպոլում երեկ Ռուսաստանի եւ Ուկրաինայի ռազմական նավատորմերի տոնական զորահանդեսից հետո ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը հայտարարել է, որ «Ռուսաստանը չի հեռանա Սեւաստոպոլից»:

«Պետական մակարդակով որոշում է ընդունված Նովոռոսիյսկում Սեւծովյան նավատորմի հենակետի շինարարություն սկսելու վերաբերյալ: Բայց դա բնավ չի նշանակում, թե մենք մտադիր ենք կրճատել Սեւաստոպոլում խարսխավորված մեր ուժերը», ընդգծել է Իվանովը: Նա շեշտել է, որ Սեւծովյան նավատորմի շտաբը մնալու է Սեւաստոպոլում:

Երեկ Ռուսաստանում նշվել է երկրի ռազմածովային նավատորմի օրը: Այս կապակցությամբ «Ռոսիա» հեռուստաընկերությունը հաղորդում է, որ տոնի առթիվ հանդիսավոր միջոցառումներ են անցկացվել ռուսաստանյան բոլոր նավատորմերում:

Ուկրաինայի ռազմական դոկտրինայից հանվել է ՆԱՏՕ-ին եւ ԵՄ-ին անդամակցելու կետը

Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչման երկրի ռազմական դոկտրինայից հանել է այն կետը, ըստ որի ՆԱՏՕ-ին եւ Եվրամիությանն անդամակցելը համարվում է եվրաատլանտյան եւ եվրոպական ինտեգրման քաղաքականության վերջնական նպատակ: Փաստաթղթի նոր խմբագրման համաձայն, «Ուկրաինայի ռազմական անվտանգության ապահովման պայմաններն են երկրների փոխվստահության ամրապնդումը, ռազմական ուժի օգտագործման սպառնալիքի հետեւողական նվազեցումը, եվրատլանտյան ինտեգրման քաղաքականությունը»:

Նախորդ տարբերակում նշվում էր, որ ՆԱՏՕ-ն եւ ԵՄ-ը Եվրոպայի անվտանգության եւ կայունության երաշխավորներն են, եւ Ուկրաինան «պատրաստվում է դրանց լիիրավ անդամը դառնալ»: Այժմ լիիրավ անդամակցության կետը հանված է եւ խոսվում է լոկ եվրոինտեգրմանը մասնակցելու մասին:

BBC-ն հաղորդում է, որ ռազմական դոկտրինայի փոփոխման մասին Ուկրաինայի պաշտոնական ներկայացուցիչը երեկ հայտարարել է Յալթայում նախագահներ Լեոնիդ Կուչմայի եւ Վլադիմիր Պուտինի հանդիպումից ընդամենը մի քանի ժամ առաջ:

Հուսեյնը բանտում գրում է, կարդում, ծառ ու թուփ խնամում

Իրաքի նախկին նախագահ Սադդամ Հուսեյնը բանտում բանաստեղծություններ է գրում, Ղուրան ընթերցում, այգեգործությամբ զբաղվում եւ ամերիկյան թխվածաբլիթ համտեսում: Լոնդոնի «Գարդիան» թերթը տեղեկացնում է, որ Հուսեյնի բանաստեղծություններից մեկը նվիրված է Ջորջ Բուշին: Այդ մասին թերթին հայտնել է Իրաքի ժամանակավոր կառավարության նախարար Բախտիար Ամինը, նշելով, թե ինքը չի հասցրել կարդալ ամբողջ բանաստեղծությունը:

Ամինի խոսքերով, նախկին նախագահի առողջական վիճակը վատ է, բայց նա «ընկճված տեսք չունի»: Հուսեյնին պահում են մենախցում, օրական 3 ժամ դուրս թողնում: Այդ ժամերին նա բանտի բակում մի քանի ծառ ու թուփ է խնամում: Նախարարն ավելացրել է, որ Հուսեյնը վերջ է դրել ցածր կալորիական սննդակարգին, ներկայումս բազմատեսակ սնունդ է ընդունում եւ այլեւս հյուծված տեսք չունի:

Բժիշկների կարծիքով, Հուսեյնի առողջական վիճակը բավական է: Նա ընդունում է արյան բարձր ճնշման եւ շաքարակագեղձի քրոնիկական հիվանդության դեղամիջոցներ: Հուսեյնին թույլատրում են օգտվել վարսավիրի ծառայություններից, բանտի գրադարանից, ցնցուղ ընդունել: Սակայն հեռուստացույցը եւ մյուս լրատվամիջոցներն արգելված են:

Բոստոնում բացվեց դեմոկրատների նախընտրական համագումարը

Բոստոնի (Մասաչուսեթսի նահանգ) «Ֆլիքսենքր» կենտրոնում երեկ բացվել է Դեմոկրատական կուսակցության նախընտրական համագումարը, որը սենատոր Ջոն Քերիին պաշտոնապես հաստատելու է որպես ԱՄՆ նախագահության դեմոկրատ թեկնածուի:

Չորսօրյա համագումարի աշխատանքին մասնակցում են 4350 պատգամավորներ: Սպասվում է 100-ից ավելի ելույթ: Աստիճանաբար որեւ գործակալության տվյալներով, բանախոսների թվում են ԱՄՆ նախկին նախագահ Բիլ Քլինթոնը, նրա տիկինը՝ սենատոր Հիլարի Քլինթոնը, նախկին փոխնախագահ Ալբերտ Գորը, Մասաչուսեթսի սենատոր Էդուարդ Քենեդին եւ ուրիշ նշանավոր դեմոկրատ գործիչներ: Ֆրանսիայի տվյալներով, սպասվում է նաեւ նախկին նախագահ Ջիմի Քարտերի մասնակցությունը, որն իր ներկայությամբ պետք է ոգեւորի Դեմոկրատական կուսակցության ընտրազանգվածին:

Համագումարի վերջին օրը ճառով հանդես կգա Ջոն Քերին՝ ներկայացնելով իր նախընտրական ծրագիրը: Մինչ այդ պետք է հաստատվի Դեմոկրատական կուսակցության ամբողջ նախընտրական ծրագիրը:

Կուսակցության ազգային կոմիտեի նախագահ Թերի Մակոլիֆը հայտարարել է, որ բանախոսներին խորհուրդ է տրված ելույթ ունենալիս չչարաշահել նախագահ Ջորջ Բուշին հասցեագրված քննադատական արտահայտությունները: Մաքոլիֆը զինակիցներին հորդորել է. «Եկեք ընտրողներին ասենք լոկ այն, թե հանուն ինչի ենք հանդես գալիս»:

2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո սա դեմոկրատների առաջին նախընտրական համագումարն է: Ձեռնարկվել են անվտանգության արտակարգ միջոցներ: Արդեն ուրբաթ օրվանից «Ֆլիքսենքր» կենտրոնի շուրջն ստեղծված է «անվտանգության գոտի»: Բոստոնի վրա առեւտրային չվերթերը կտրուկ սահմանափակված են: Մասնավոր օդանավերի թռիչքները լիովին արգելված են: Քաղաքի ծովախորշում պարեկություն են անում ափամերձ պաշտպանության պարեկանավակներ, իսկ երկնքում հերթապահում են ռազմական ուղղաթիռներ:

Ըստ Աստիճանաբար որեւ, համագումարի անվտանգությանն ուղղված միջոցառումների ընդհանուր ծախսերը կազմում են մոտ 60 մլն դոլար:

Պ. Ք.

Մշակույթ

Հայկական ակադեմիական երաժշտությունը 21-րդ դարում

*Հայ դասական կոմպոզիտորները թողել են հարուստ ժառանգություն: Այսօր էլ շարունակվում է այդ ավանդույթը: Ժամանակակից հայ կոմպոզիտորներն աշխատում են, ստեղծում նորը: Իսկ թե ինչպիսի ընթացք են ստանում նրանց ստեղծագործությունները (կատարողական եւ ճանաչողական իմաստով), նաեւ երաժշտական զարգացումների, հեռանկարների, հիմնախնդիրների մասին է զրուցում կոմպոզիտոր, դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր, Երեւանի կոնսերվատորիայի պրոֆեսոր **Սուրեն Չաքարյանը**:*

- Տարիներ առաջ դուք այն կարծիքին էիք, որ հայ կոմպոզիտորները ստեղծում են վառ երաժշտություն, որը հաճախ երաժշտասեր հասարակությունը հնարավորություն չի ունենում ունկնդրելու: Այժմ ինչպիսի՞ է իրավիճակը:

– Սոցիալ-տնտեսական իրավիճակը գլոբալ փոփոխությունների չի ենթարկվել, ուստի մեր ոլորտում դրությունը գրեթե նույնն է, ինչ տարիներ առաջ: Ամեն ինչ կախված է ֆինանսավորումից: Համերգասրահ վարձելու, կատարողներին հոնորար տալու խնդիրն է մնացել: Ժամանակակից երաժշտության վրա ավելի փոքր են ուշադրություն դարձնում: Այդ միտումն ամբողջ աշխարհում է նկատելի: Կոմերցիոն շահ չկա համերգ կազմակերպողների, հովանավորների, կատարողի համար: Կան կատարողներ, որոնք կցանկանային իրենց ցանկում ունենալ նաեւ ժամանակակից երաժշտություն, բայց չեն ցանկանում ունկնդրին չհասկացված թողնել: Մեծ մասամբ կատարում են դասական ստեղծագործություններ, որոնցով ապահովվում է կատարողական հաջողությունը:

- Ճգնաժամային տարիներին Լ. Ճգնավորյանը ժողովրդի մեջ սեր արթնացրեց դասական երաժշտության հանդեպ:

– Ունկնդիրը դաստիարակվել է այսօր որպես սպառող: Արվեստասեր հասարակությունն ընդունում է այն երաժշտական կաղապարը, որով դաստիարակվել է: Համամասնակցություն է պետք երաժշտությունը լսելու դահլիճ: Ամեն մարդ, երբ առնչվում է ստեղծագործության հետ, պետք է գտնի իր հոգու արտացոլումը: Նա կարող է միայն ինքն իր միջոցով, ներքին բովանդակությամբ հասկանալ, զգալ, գնահատել այդ ամենը: Դա վերաբերում է արվեստի յուրաքանչյուր ոլորտին: Ես հիշում եմ, երբ ժամանակին Մոսկվայում Տարկովսկու «Սալյեր» ֆիլմի պրեմիերայի ընթացքում հանդիսատեսի զգալի մասը դուրս եկավ դահլիճից: Որքան բարձր է արվեստի գործն իր խորությամբ, արժեքով, նրբությամբ, անսովորությամբ, այնքան արժեւորողների շրջանակը սկսում է նեղանալ: Դա օրինաչափություն է եւ շատ բնական: Ես չեմ-ասում, որ այն, ինչ չի ընդունվում, ընկալվում արվեստում, ուրեմն այդ ամենը տաղանդավոր է, հետաքրքրական, իհարկե, ոչ: Հարցն այն է, որ եթե կան հետաքրքրական, արժեքավոր ստեղծագործություններ, իսկ դրանք, անշուշտ, կան, չդրվեն մի հարթության վրա, վատի կողքին:

- Բայց չէ՞ որ կան երաժիշտ մասնագետներ:

– Երաժիշտ մասնագետներից յուրաքանչյուրն ունի իր ճաշակը, կողմնորոշումը, թուլությունները: Կարծիքները չեն կարող միշտ համընկնել, դա էլ է բնական:

- Ժամանակներն իրենց ներգործությունն ունե՞ն ստեղծագործողի վրա:

– Քաղաքական տեսակետից՝ ոչ: Երաժշտական լեզուն նշանակություն ունի ստեղծագործողի համար, այն անընդհատ զարգացման մեջ է: Գալիս է շրջան, երբ որոշակի ձեւով սպառված է լինում մի ոճ, մի երաժշտական լեզու: Եվ աշխատել այդ լեզվով պրոֆեսիոնալի համար կոչվում է զբաղվել սիլիզացիայով: Այսօր դու չես կարող Շոպենի լեզվով գրել եւ ունենալ ֆո դեմը:

- Ըստ Ձեզ, ի՞նչ մեխանիզմներ են անհրաժեշտ խթանելու ժամանակակից արվեստագետի աշխատանքային ռիթմը:

– Ստեղծագործողը գրում է, որովհետեւ չգրել, չարտահայտվել չի կարող: Հայաստանում չի գործում այն, ինչ տարածված է ամբողջ աշխարհում՝ պատվերների պրակտիկան: Քանզի պատվերի դեպքում արդեն կատարող տարբեր մեկնաբանություններ է տալիս: Մշակույթի զարգացմանն արտասահմանում նպաստում են հրատարակիչները, հիմնադրամները, բարեգործները: Կարելի է նույնը մեզ մոտ կիրառել, հաճախակի հեռուստատեսությամբ ցուցադրել ժամանակակից երաժշտության տեսաերիզներ: Նկարիչ Հենրիկ Էլիբեկյանը երբեմն իր արվեստանոցը սալոնի է վերածում եւ երաժշտական լսումներ կազմակերպում:

- Ա. Խաչատրյանը համաշխարհային ճանաչում ունի: Ինչո՞ւ մեր լավագույն կոմպոզիտորները լայն ճանաչում չեն ստանում:

– Խաչատրյանի երաժշտությունը մատչելի է, մեծ գործոն է նրա երաժշտական լեզուն: Պետք է ասեմ, որ նաեւ Ալեքսանդր Հարությունյանի շեփորի կոնցերտը մեծ հաջողություն ունի ամբողջ աշխարհում: Հետաքրքրվում են նաեւ մեր մյուս ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններով, բայց դա քիչ է:

- Գուցե հենց իրենց՝ ստեղծագործողների նախաձեռնության պակասի՞ց է:

– Իմ երկու ստեղծագործությունների պրեմիերան կայացել է Նյու Յորքում, բայց դա իմ նախաձեռնությունը չի եղել, եւ ես ներկա չեմ եղել համերգներին: Իմ մեկ այլ ստեղծագործությունը՝ «Մոնոգրաֆը», թավջութակի եւ նվագախմբի համար հնչել է Ֆրանսիայում՝ կատարողի նախաձեռնությամբ:

ԱՐԴԱ ԱԲԵՐԵՅԱՆ

Լեւոն Չաքարյանի գրադարանը՝ «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնին

Օրերս Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի «Սփյուռք» գիտակրթական կենտրոնում տեղի ունեցավ հուշ-երեկո՝ նվիրված հայ լրագրության երախտավոր, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի երկարամյա խմբագիր Լեւոն Չաքարյանին (1920-2003):

Հանդեսը վարում էր «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը: Նա ջերմ շնորհակալություն հայտնեց հանդեսին իրենց ներկայությամբ պատված Լեւոն Չաքարյանի ընտանիքի անդամներին:

Իսկ շնորհակալության համար պատեհ առիթն ավելի քան խորհրդանշական էր. խմբագրի այրին՝ Տիկին Շուշան Ադամյանը, դուստր Եվան, որդիներ Զարեհը եւ մասնավորապես Հովհաննես Չաքարյանը, որը հանրապետության հայտնի մանկավարժ լեզվաբաններից է, ԿԳՆ Լեզվի պետական տեսչության պետի տեղակալ, ստանց եւ առանձնակի վստահությամբ կենտրոնին հանձնեցին Լեւոն Չաքարյանի անձնական գրադարանի արեւմտահայ գրականագիտական բաժինը՝ տարիների ընթացքում ձեռք բերված սփյուռքին վերաբերող շուրջ 220 արժեքավոր գրքեր եւ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի 30 տարվա ամբողջական հավաքածուն:

Լ. Չաքարյանը գրասեր եւ գրագետ էր: Տասնամյակների ընթացքում անձնական եզակի մասնագիտական գրադարան էր ստեղծել: Դրանք այսուհետ «Սփյուռք» կենտրոնի ընթերցասրահում կպահվեն որպես Լ. Չաքարյանի անհատական անձեռնմխելի ֆոնդ: Այդ ֆոնդի բացմանն էլ նվիրված էր հանդեսը:

Նշենք, որ դա արդեն անձնական չորրորդ անձեռնմխելի գրադարանն է, որ հանգրվանում է օր օրի հարստացող համալսարանի սփյուռքագիտական գրադարանում:

Լեւոն Չաքարյանի հիշատակի եւ նրա գրքերի հանձնման այս արարողության մասին գնահատանքի շատ խոսքեր հնչեցին: Պրոֆեսոր Պարույր Մուրադյանի, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն Ազատ Երիազարյանի, ԵՊՀ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լեւոն Ջուխասզյանի, հոգեբան Վազգեն Պողոսյանի, գրող Հրաչյա Մաթեւոսյանի, լրագրական աշխարհից՝ Գրիգոր Գույումջյանի, Սեյրանուհի Գեղամյանի վերհուշերում ամբողջացավ Լ. Չաքարյանի մարդկային նկարագիրը: Աշխատանքային գործունեությունն սկսելով մանկավարժությամբ՝ նա անցել է լրագրության, աշխատակցել «Ավանգարդ» թերթին, «Սովետական Հայաստան» ամսագրին, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթին, որի գլխավոր խմբագիրն է եղել ուղիղ 22 տարի:

Լ. Չաքարյանը յուրահատուկ պաշտամունք ուներ բառի հանդեպ, ճանաչված բառաստեղծ էր: Նա առօրյա գործածություն ստացած հայոտավոր նորաբանությունների հեղինակ է եւ հիրավի, անխոնջ մշակ էր, որ չէր զլանում ոչ միայն նյութեր պատվիրել, ընտրել, հիմնովին վերամշակել, այլեւ թերթի մանրակերտ պատրաստել, տառատեսակ ճշտել, տպածոներ սրբագրել:

Լեւոն Չաքարյանը հանրագիտակ խմբագրի կերպար էր, որ մնայուն տեղ է նվաճել հայ լրագրության պատմության մեջ:

ՏԻԳՐԱՆԵՍ ԵՂԻՅԱՆ

«Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի աշխատակից

Գեղակադեմիայի դասախոսները բնանկարային աշխատանքներով

Գեղարվեստի ակադեմիայի «Ալբեր եւ Թոմ Բոյաջյան» ցուցասրահում հաճախակի կազմակերպվող անհատական եւ խմբակային՝ գեղանկարչության, գրաֆիկայի, քանդակի, կոլաժային աշխատանքների եւ այլ բնույթի ցուցահանդեսները (Արփինե Նալբանդյանի, Արմեն Վարդանյանի, Հարություն Վրդ. Պզտիկյանի, Գեսիկ Բաղդասարյանի, Մարիամ Հակոբյանի եւ այլն) հաստատես ուսանողներին առիթ են տալիս ոչ միայն ցփվելու, նաեւ անմիջականորեն մասնակցելու այդ ցուցադրություններին: Դրանցից վերջինն ավարտական կուրսի ուսանողների գրաֆիկական աշխատանքներն էր ներկայացնում: Ցուցասրահը նաեւ հնարավորություն է ընձեռում ակադեմիայի դասախոսական հաստվածին ներկայանալ իբրեւ ստեղծագործող արվեստագետ: Հուլիսի 16-ին ակադեմիայի դասախոսների (արվեստաբանության, նկարչության տեխնոլոգիայի, գեղանկարչության, դիզայնի եւ այլն) «Բնանկար» խորագրով ցուցահանդեսը՝ ժանրային ընդհանրությամբ սակայն, ամենատարբեր ոճերի՝ դեկորատիվ, վերատպադրողական, ֆանտաստիկ եւ այլ դրսեւորումներ ուներ, գեղանկարչության ամենատարբեր ուղղությունների՝ պոստիմպրեսիոնիզմից սկսած (կուբիզմ, աբստրակցիոնիզմ, սյուռռեալիզմ եւ այլն) ազդեցություններով: Միջին եւ ավագ սերնդի դասախոսները ներկայացված էին շուրջ 40 աշխատանքներով, հիմնականում մեկական գործով:

Բնության տրամադրությունները, պահի, վիճակի զգացողությունները նկարներում արտահայտված են յուրովի, թեեւ մեկ նկարով նկարչի ստեղծագործական աշխարհը թափանցելն էլ դժվար է: Անատոլի Գրիգորյան, Էդվարդ Իսաբեկյան, Կարեն Աղամյան, Էդվարդ Վարդանյան, Վիգեն Ղազարյան, Անդրանիկ Կիլիկյան, Գագիկ Գեւորգյան, Վիլիկ Չաքարյան, Գրիգոր Գեղամյան, նրանց աշխատանքներում բնության ընկալումը տարբեր դրսեւորումներ է գտել՝ ռոմանտիկ-վերհուշայինից նկարագրական-վերացարկված, երբեմն քաղաքային կամ գյուղական բնակավայրի պատկերային զուգորդությամբ. «Լվված գյուղը» Խաչատուր Ազիզյան, «Հին Երեւան»՝ Անատոլի Գրիգորյան, «Կորած մանկություն»՝ Վիգեն Ղազարյան:

Արդեն անհետացած իրողությունները վերհուշի միջոցով կյանքի են կոչվել գույն ու ձեւի պատկերով, այդպիսին էր արվեստի պատմության ամբիոնի վարիչ Վիգեն Ղազարյանի «Կորած մանկությունը»՝ հին Երեւանի այլեւս գոյություն չունեցող մի բնակավայրի, բակի, տների, դրանց հարթ կտուրների վրա ածող ծաղիկների, մանկության ֆուտբոլի դաշտի համայնապատկերով:

Վարպետությունից զատ, առհասարակ ճշմարիտ վերապրումն է, որ նկարը զուտ գեղագիտական առարկայից կամ արժեքից վերածում է կենդանի իմպուլսներ կրողի եւ այդ զգացումը փոխանցողի: Այդ տեսակետից առանձնանում էր Էդվարդ Իսաբեկյանի «Զրանցքի մոտ» գործը՝ թանձր գույներով ու պատկերներով:

Պահը կամ վիճակը, բնության ներքին ռիթմը, որ է՝ ներդաշնակությունը զգալն ու վերարտադրելը հաջողվել էր կերպարվեստի ֆակուլտետի դեկան Էդվարդ Վարդանյանին: «Լուսաբաց», «Շորժա», աշխատանքներում բնությունն անձնավորված, ենչառու է ու տաք, որը միայն վառ կաղույտի, դեղինի կամ կարմիրի արդյունքը չէ, բնությունն իր մոտ առարկայական գոյությունից ասես մարդկային ձեւ ու կերպարանք է ստանում, բնությունը ինքնաստեղծագործման պրոցեսում է լիքը՝ վրան ամպը, կեսօրը՝ սպասողական վիճակով, լուսաբացը՝ լի ակնկալիքով. «Յուրաքանչյուրն իր ընտրությունն է արել՝ ներկայացնելու բնության իր ընկալումները: Մեկը զուտ բնանկար է ընտրել, մյուսն իր հերոսին կապել է բնության հետ: Ես զուտ բնություն չեմ նկարում, իմ սիմվոլը անպայման պիտի լինի, որն այդ միջավայրին հարազատ է», զգացմունքների վառ գունայնությամբ նկարիչ Էդվարդ Վարդանյանը մտերմիկ զրույցի է բռնվում լեռան, արեւի, լճի, լուսաբացի, քարի հետ:

ՄԵԼՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Դանիել Վարուժանի խաղաղության կտավները Բոստոնի քաղաքապետարանում

Բոստոնի քաղաքապետարանի «Պիդմոնթ» դահլիճում մինչեւ հունիսի 30-ը բաց է լինելու «Արվեստի խաղաղություն» ընդհանուր խորագրով շրջիկ ցուցահանդեսը, որն ընդգրկում է մարդկությանը մտահոգող խնդիրներ ներկայացնող 21 կտավներ, հաղորդում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Կտավները, որոնք զուտ են քաղաքական կամ կրոնական առնչություններից, պատկանում են արդեն 25 տարի Բոստոնում բնակություն հաստատած միջազգայնորեն ճանաչված նկարիչ Դանիել Վարուժան Հաջինյանի վրձնին: Ցուցահանդեսի հովանավորներն են քաղաքապետարանի խորհրդականներ Ջոն Թոբինն ու Չարլզ Յանսին: Վերջինիս գնահատմամբ, Հաջինյանի ստեղծագործությունները նպաստում են բարձրացնելու այցելուների գիտակցությունը: Նրանց մատուցվում են խաղաղությունը, մարդկությունը եւ անկախակալ մտածողությունը խթանող թեմաներ: «Արտի խաղաղություն» կտավն անդրադառնում է սեպտեմբերի 11-ի իրադարձություններին, «Հացի խաղաղությունը»՝ սովի խնդրին, «Քաղաքում միայնակը»՝ անտուն մարդկանց, «Թղթե աղավնին»՝ խաղաղության փխրունությանն ու անմեղությանը, «Ցուլի անկումը»՝ բռնատիրության ավարտին եւ ժողովրդավարության հաղթանակին, «Երաժշտության խաղաղությունը»՝ համերաշխ ապրելուն, «Միեւնույն սրինգը»՝ նվագելուն եւ այլն:

«Վարուժանի մեթոդը, տեխնիկան եւ թեման այնքան ցայտուն ներկայացնելու նրա ունակությունն է, որ ցուցահանդեսը դարձնում է եզակի եւ տեսարժան», նշում է «Ամերիկայի հայկական գրադարանի եւ թանգարանի» աշխատակից Սաբին Ջուլֆայանը:

Ցուցահանդեսը, որի առթիվ ընդունելություն է կազմակերպվել հունիսի 15-ին, առաջին անգամ հանրությանն է ներկայացվել 2003 սեպտեմբերին:

Հ. Օ.

«Փյունիկին» լուրջ խնդիր է սպասում

Լուչեսկուն մտադիր է արդեն Երևանում մրցակցին տհաճություն պատճառել

Չեմպիոնների լիգայի որակավորման երկրորդ փուլի առաջին խաղում այսօր Երևանում «Փյունիկը» կիյևրնկալի Ուկրաինայի գավաթակիր ու փոխչեմպիոն Դոնեցկի «Շախտյորին»: Ժամը 21-ին սկսվելիք այդ մրցավեճը սպասվում է մեծ հետաքրքրությամբ: Ուկրաինական ֆուտբոլը քաջ հայտնի է մեր ֆուտբոլասերներին: Որպես կանոն ուկրաինական թիմերը ուժային կոշտ պայքար են մղում, ֆուտբոլիստներն աչքի են ընկնում ֆիզիկական լավ պատրաստվածությամբ: Հանձին «Շախտյորի» «Փյունիկին» այսօր չափազանց լուրջ խնդիր է սպասում: Ուկրաինայի գավաթակիրը գերազանց է մեկնարկել վերջերս սկսված երկրի առաջնությունում եւ 3 տուրից հետո ստանձնել է առաջատարի դերը: Հենց մեկնարկային տուրում թիմը նոր գլխավոր մարզչի՝ ռումինացի Միրչա Լուչեսկուի գլխավորությամբ Կիեւում 2-0 հաշվով համոզիչ հաղթանակ տոնեց իր գլխավոր հակառակորդի՝ «Դինամոյի» նկատմամբ: Հաջորդ խաղում «Շախտյորը» Դոնեցկում հաղթեց «Ցեռնոմորեցին» (1-0), իսկ մինչ Երեւան ժամանելը Ղնեպրոպետրովսկում կամային հաղթանակ տարավ «Դնեպրի» նկատմամբ (3-1): «Շախտյորը» նախապատրաստական փուլում զգալիորեն համալրել է կազմը: Առանց այն էլ մեծ թվով լեգեոներներ ունեցող թիմում ընդգրկվել են եւս 5 լեգեոներներ, որոնց ցուցադրած խաղից գոհ է Լուչեսկուն: Ակումբի նախագահ Ռինատ Ախմետովի ամենամեծ ձեռքբերումն, անկասկած, բրազիլացի կիսապաշտպան Մատուզալեմն է, որ հանդես է գալիս 9 համարի մարզաշապիկով: Նրանով հետաքրքրվում էին «Ռոման», «Յուվենտուսը», «Բարսելոնը» եւ «Վալենսիան»: Մյուս բրազիլացին՝ Դոան Բաշիստան թեեւ Մատուզալեմի նման տաղանդավոր չէ, սակայն աշխատասեր է, յուրաքանչյուր գնդակի համար պայքար է մղում մինչեւ վերջ: Լուչեսկուն Բաշիստային ծանոթ է «Գալաթասարայից»: «Շախտյորը» համալրել են նաեւ չեխ դարպասապահ Յան Լաստուվկան, պաշտպաններ, ռումինացի Կոսմին Բերկեուանուն եւ չեխ Թոմաշ Հյուբմանը: Այսօր «Շախտյորն» Ուկրաինայի թերեւս ամենաինտերնացիոնալ ակումբն է. հայտավորված 25 ֆուտբոլիստներից միայն 8-ն են տեղացի:

«Սպորտ-էքսպրեսին» տված հարցազրույցում անդրադառնալով «Փյունիկի» հետ առաջիկա հանդիպմանը, Լուչեսկուն հետեւյալն է ասել. «ՀՀ չեմպիոնի հետ մեր ծանոթությունն առայժմ հեռակա պատրաստվածությամբ: Հանձին «Շախտյորի» «Փյունիկին» այսօր չափազանց լուրջ խնդիր է սպասում: Ուկրաինայի գավաթակիրը գերազանց է մեկնարկել վերջերս սկսված երկրի առաջնությունում եւ 3 տուրից հետո ստանձնել է առաջատարի դերը: Հենց մեկնարկային տուրում թիմը նոր գլխավոր մարզչի՝ ռումինացի Միրչա Լուչեսկուի գլխավորությամբ Կիեւում 2-0 հաշվով համոզիչ հաղթանակ տոնեց իր գլխավոր հակառակորդի՝ «Դինամոյի» նկատմամբ: Հաջորդ խաղում «Շախտյորը» Դոնեցկում հաղթեց «Ցեռնոմորեցին» (1-0), իսկ մինչ Երեւան ժամանելը Ղնեպրոպետրովսկում կամային հաղթանակ տարավ «Դնեպրի» նկատմամբ (3-1): «Շախտյորը» նախապատրաստական փուլում զգալիորեն համալրել է կազմը: Առանց այն էլ մեծ թվով լեգեոներներ ունեցող թիմում ընդգրկվել են եւս 5 լեգեոներներ, որոնց ցուցադրած խաղից գոհ է Լուչեսկուն: Ակումբի նախագահ Ռինատ Ախմետովի ամենամեծ ձեռքբերումն, անկասկած, բրազիլացի կիսապաշտպան Մատուզալեմն է, որ հանդես է գալիս 9 համարի մարզաշապիկով: Նրանով հետաքրքրվում էին «Ռոման», «Յուվենտուսը», «Բարսելոնը» եւ «Վալենսիան»: Մյուս բրազիլացին՝ Դոան Բաշիստան թեեւ Մատուզալեմի նման տաղանդավոր չէ, սակայն աշխատասեր է, յուրաքանչյուր գնդակի համար պայքար է մղում մինչեւ վերջ: Լուչեսկուն Բաշիստային ծանոթ է «Գալաթասարայից»: «Շախտյորը» համալրել են նաեւ չեխ դարպասապահ Յան Լաստուվկան, պաշտպաններ, ռումինացի Կոսմին Բերկեուանուն եւ չեխ Թոմաշ Հյուբմանը: Այսօր «Շախտյորն» Ուկրաինայի թերեւս ամենաինտերնացիոնալ ակումբն է. հայտավորված 25 ֆուտբոլիստներից միայն 8-ն են տեղացի:

«Սպորտ-էքսպրեսին» տված հարցազրույցում անդրադառնալով «Փյունիկի» հետ առաջիկա հանդիպմանը, Լուչեսկուն հետեւյալն է ասել. «ՀՀ չեմպիոնի հետ մեր ծանոթությունն առայժմ հեռակա

կարգով է ընթանում: Դիտել եմ թիմի մասնակցությամբ հանդիպումների տեսագրությունները: «Փյունիկը» տեխնիկապես հագեցած ֆուտբոլ է ցուցադրում, ֆուտբոլիստներն անհատապես լավ են պատրաստված: Այդ կարգի թիմերի հետ խաղերում պետք է ուշադիր գործել: Նրանք հաճախակի ռիսկի են դիմում եւ կարող են զարմանալի բաներ կատարել: Սակայն անհաջողության դեպքում լինում է, որ ադրագ կորցնում են հավատը սեփական ուժերի հանդեպ: Մենք շատ հարգալից ենք վերաբերվում «Փյունիկին» եւ արդեն Երեւանում, չսպասելով Դոնեցկում կայանալիք պատասխան հանդիպմանը, կփորձենք հայկական թիմի համար լուրջ տհաճություններ ստեղծել»:

Կարծում ենք ռումինացի մասնագետը ճիշտ հետեւություններ է հանգել «Փյունիկի» ելույթներից: Այո, այսօր մեր չեմպիոնին բավական լուրջ խնդիր է սպասում: Հարկ է չափազանց ուշադիր ու զգոն գործել պատասխանատվությունում, ագրեսիվ ու հնարամիտ՝ առջեւի գծում: Այլապես ինչպես խոստացել է «Շախտյորի» մարզիչը, ուկրաինական ակումբը կարող է լուրջ տհաճություններ պատճառել արդեն երեւանյան խաղում: «Պոբեդայի» հետ երեւանյան պատասխան հանդիպումը բացահայտեց «Փյունիկի» խաղում տեղ գտած թերությունները: Դրանք չպետք է կրկնվեն այսօրվա մրցավեճում: «Շախտյորն» ուկրաինական

Աշխարհի չեմպիոններն ուժեղագույնն են նաեւ Ամերիկայում

Վերջնագիծը հասեց ֆուտբոլի Ամերիկայի գավաթի հերթական խաղարկությունը: Վեցորոշ խաղում մայրցամաքի չեմպիոնի տիտղոսը վիճարկեցին Բրազիլիայի եւ Արգենտինայի հավաքականները: Աշխարհի հնգակի չեմպիոնների համար հանդիպումն այնքան էլ հաջող չստացվեց: 21-րդ րոպեին պաշտպան Լուիզաոն վայր գցեց մրցակցին եւ Բրազիլիայի հավաքականը պաշտվեց 11 մ հարվածով: Քրիստիան Գոնսալեսը դիպուկ հարվածով բացեց հաշիվը: Առաջին խաղակեսի ավարտին Լուիզաոն խափեց իր մեղքը՝ հավասարեցնելով հաշիվը: Սակայն նրան վիճակված չէր ավարտել հանդիպումը: 80-րդ րոպեին օդային մենամարտում նա վնասվածք ստացավ եւ տեղափոխվեց հիվանդանոց: 87-րդ րոպեին արգենտինացի Սեզար Դելգադոն գրավեց դարպասը եւ թվում էր, թե վճռեց խաղի ելքը: Սակայն 3 րոպե անց Ադրիանոն բրազիլացիներին փրկեց պարտությունից եւ գավաթը նվաճելու հույս պարգեւեց իր թիմին: Հաղթողը որոշվեց 11 մ հարվածներով: Այստեղ հենց սկզբից անհաջողությունն ուղեկցեց արգենտինացիներին. Դալեսանդրոն չկարողացավ հաղթող դուրս գալ դարպասապահի հետ մենամարտում, իսկ Հայնցի հարվածը շեղ ստացվեց: Բրազիլացիները հաղթեցին 4-2 հաշվով:

Մրցաշարի լավագույն ռմբարկու ճանաչվեց բրազիլացի Ադրիանոն, որը 6 խաղում խփել էր 7 գնդակ: Հանդիպման ավարտից հետո արգենտինացիների գլխավոր մարզիչ Մարսելո Բիելսան հայտարարել է, որ իր թիմից հաջողությունը երես էր թեքել 11 մ հարվածաշարի ժամանակ: Բրազիլացիների մարզիչ Կառլոս Ալբերտո Պարեյրան նշել է, որ Ամերիկայի գավաթի խաղարկությունն իր խաղամակարդակով զիջում էր միայն աշխարհի առաջնությանը եւ կարելի է համեմատել Եվրոպայի առաջնության հետ: Նա իր գոհունակությունն է հայտնել հավաքականի ֆուտբոլիստներից:

Չիդանն ամենահանրաճանաչն է Ֆրանսիայում

IFOP ընկերությունը Le Journal de Dimanche շաբաթաթերթի պատվերով յուրօրինակ հարցում էր անցկացրել Ֆրանսիայի բնակչության շրջանում՝ որոշելու երկրի ամենահանրաճանաչ մարդուն: Հարցման արդյունքներով հաղթող է ճանաչվել Մադրիդի «Ռեալի» եւ Ֆրանսիայի հավաքականի կիսապաշտպան Զինեդին Զիդանը: Երկրորդ տեղը գրավել է էստրադային երգիչ Միշել Սարդուն: Լավագույն եռյակը եզրափակել է նախկին թենիսիստ Յանիկ Նոան:

Անանդն առաջինը հաղթեց

Դորտմունդի շախմատային մրցաշարում առաջինը Վիշվանաթան Անանդն ընդհատեց ոչ-ոքիների շարքը: Երկրորդ տուրում նա հաղթեց Պյոտր Սվիդլերին: Մյուս պարտիաներում կրկին խաղաղ դաշն կնքվեց: Միավորը կիսեցին Նայդիչն ու Ռուբլյովսկին, Կարյակինն ու Բոլոգանը, Կրամնիկն ու Լեկոն: 3-րդ տուրում եւս միայն մեկ պարտիա արդյունավետ ելք ունեցավ: Ռուսաստանցի Պյոտր Սվիդլերը պարտության մատնեց Արկադի Նայդիչին (Գերմանիա): Լեկո-Կարյակին, Ռուբլյովսկի-Անանդ, Բոլոգան-Կրամնիկ պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Չորրորդ տուրում եւս մրցակիցները չափից դուրս զգուշավորություն հանդես բերեցին, որի հետեւանքով բոլոր պարտիաներն էլ ավարտվեցին ոչ-ոքի: Միավորը կիսեցին Նայդիչն ու Անանդը, Կարյակինն ու Կրամնիկը, Ռուբլյովսկին ու Սվիդլերը, Բոլոգանն ու Լեկոն:

Չորս տուրից հետո առաջատարը 2,5 միավորով Անանդն է: Բոլոգանը, Սվիդլերը, Կարյակինը, Ռուբլյովսկին, Կրամնիկը, Լեկոն վաստակել են 2-ական միավոր, Նայդիչի հաշվին գրանցված է 1,5 միավոր:

Մրցաշարում երկիրխանություն է

Բիլի գրոսմայստերական մրցաշարում երկիրխանություն է: 6 տուրից հետո աղյուսակը 4-ական միավորով գլխավորում են Ալեխանդր Մորոզեւիչն ու Կրիշնան Շաշիկիրանը: Վերջինս ոչ-ոքի խաղաց Բաֆրոյի հետ, այնուհետեւ հաղթեց Պելետյեին: Իսկ ահա Մորոզեւիչը Պելետյեի եւ Մակեյնի հետ պարտիաներում բավարարվեց ոչ-ոքի արդյունքով: Պոնոմարյովը 3,5 միավորով հետապնդում է առաջատարներին: Նա 5-րդ տուրում անսպասելի պարտություն կրեց Լյուկ Մակեյնից, որը մինչ այդ չորս անընդմեջ պարտություն էր կրել: Հաջորդ տուրում Պոնոմարյովը հաղթական միավոր գրանցեց իր օգտին Բաֆրոյի հետ մրցախաղում: 2,5-ական միավորով հաջորդ տեղերում են Պելետյեն ու Բաֆրոն, իսկ Մակեյնը 1,5 միավորով եզրափակում է աղյուսակը:

Արմսթրոնգի 6-րդ հաղթանակը

Ամերիկացի հանրահայտ հեծանվորդ Լենս Արմսթրոնգը 6-րդ անգամ անընդմեջ դարձավ «Տուր դը Ֆրանս» բազմօրյա հեծանվավազքի հաղթող: Սա այդ մրցումների յուրաքանչյուր ռեկորդ է: Մինչ այդ միայն Ժակ Անկետիլին, Բեռնար Հինոլտին, Էդի Մերքսին եւ Միգել Ինդուրայնին էր հաջողվել 5 անգամ հաղթող ճանաչվել հեծանվավազքում: Այժմ Արմսթրոնգը գերազանցեց նրանց ցուցանիշը եւ դարձավ ռեկորդակիր: Արմսթրոնգը խոստովանել է, որ հաղթանակն իրեն դժվարությամբ չտրվեց: Նա իր պրոֆեսիոնալ գործունեությունը սկսել է 1992 թ. Բարսելոնի օլիմպիադայում՝ գրավելով 14-րդ տեղը: 1999 թ.-ից նա անփոփոխ հաղթող է ճանաչվել «Տուր դը Ֆրանսում»: Արմսթրոնգի մշտական մրցակից Յան Ուլրիխը բավարարվեց 4-րդ տեղով:

Մասկաեւը հաղթեց անպարտելի նիգերիացուն

Ռուսաստանցի գերծանր քաշային պրոֆեսիոնալ բոքսֆամարտիկ Օլեգ Մասկաեւը վերջին երկու տարիներին իր ամենանշանակալից հաղթանակը տոնեց: Ամերիկյան Ատլանտիկ Սիթիում նա 10 ռաունդանոց վարկանիշային մենամարտում միավորներով հաղթեց 1996 թ. օլիմպիական խաղերի փոխչեմպիոն, մինչ այդ պրոֆեսիոնալ ռինգում անպարտելի համարվող (21 հաղթանակ, որից 12-ը՝ նոկաուտով) նիգերիացի Դեվիդ Դեֆիագբոնին: Այսպիսով, 2003 թ. ռինգ վերադառնալուց հետո 35-ամյա Մասկաեւն իր 7-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց:

2001-2002 թթ. անհաջող մի քանի մենամարտերից հետո Մասկաեւը մեկամյա ընդմիջում վերցրեց՝ այդ ընթացքում փոխելով իր մարզիչներին ու մենեջերներին: Նա պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 34 հանդիպումներից 29-ում հաղթել է (23-ը՝ նոկաուտով), 5-ում՝ պարտվել: Վերջին 7 մենամարտերից միայն Դեֆիագբոնի հետ մրցավեճն է մինչեւ վերջ շարունակվել: Դրանցից 5-ում ռուս բոքսֆամարտիկը մրցակցին նոկաուտի է ենթարկել առաջին երկու ռաունդներում, մեկում՝ 9-րդ ռաունդում:

Մրցավարը սպանեց մարզչին

Հարավաֆրիկյան Հանրապետությունում կայացած ֆուտբոլային խաղի ժամանակ ողբերգություն տեղի ունեցավ: Խաղային դրվագներից մեկի ժամանակ մրցավարը դեղին քարտ ցույց տվեց ֆուտբոլիստներից մեկին: Դա առաջ բերեց մարզիչների դժգոհությունը: Եվ երբ թիմի գլխավոր մարզիչը փորձեց մոտենալ մրցավարին ու նրանից բացատրություն պահանջել, վերջինս հանեց ատրճանակն ու կրակեց: Մարզիչը տեղում մահացավ, իսկ հանցագործ մրցավարին ձերբակալեցին:

Ռեկորդը գերազանցվեց

Օլիմպիական խաղերի մեկնարկի շեմին ռուսաստանցի ծողացատկորդուհի Ելենա Իսինբաեւան համաշխարհային նոր ռեկորդ սահմանեց: Բիրմինգհեմում անցկացված միջազգային մրցումներում Իսինբաեւան հաղթահարեց 4 մ 89 սմ բարձրությունը: Նա մեկ սանտիմետրով գերազանցեց բոլորովին վերջերս Սվետլանա Ֆեոֆանովայի սահմանած ռեկորդը:

Պայմանագիրը չեղյալ է հայտարարվել

«Տոտենհեմը» չեղյալ է հայտարարվել ուկրաինացի Սերգեյ Ռեբրովի հետ կնքած պայմանագիրը, որի ժամկետը լրանում էր հաջորդ տարի: Նա այժմ ազատ խաղացողի կարգավիճակով փորձաշրջան է անցնում «Վեստ Հեմում»: Ռեբրովը «Տոտենհեմ» էր տեղափոխվել Կիեւի «Դինամոյից» 2000 թ. հունիսին՝ 5 տարով պայմանագիր կնքելով անգլիական ակումբի հետ: Այդ ընթացքում նա պետք է 20 մլն դոլար ստանար: Սակայն նրա խաղը «Տոտենհեմում» չստացվեց: Նա ընդամենը 16 գնդակ խփեց Անգլիայում, հետո վարձավճարով խաղաց «Ֆեներբախչեում», սակայն այստեղ էլ ոչինչ չստացվեց:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Հորդառաս անձրեւներն ու կարկուտը կրկին մեծ վնասներ են հասցրել

Ինչպես տեղեկացանք ԱԻՎ լրատվական կենտրոնի օպերատիվ տեղեկագրից, հուլիսի 24-ին Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղում տեղացած ուժեղ անձրեւների հետեւանքով բարձրացել է անձրեւաջրերի մակարդակը 10-15 սմ: Դեմքի վայր մեկնած ԱԻՎ եւ քաղաքացիական պաշտպանության վարչության անձնակազմը պարզել է, որ 2 ժամ տեղացած հորդառաս անձրեւի հետեւանքով հեղեղաջրերը լցվել են տների նկուղային հարկերը, ցանքատարածքները: Աղավնաձորի գյուղապետարանն իր ուժերով մաքրել է հեղեղատը եւ գյուղամիջյան ճանապարհները: Վնասի չափերը ճշտվում են: Նույն օրն ուժեղ կարկուտից տուժել են Շիրակի մարզի Հովսաբեն, Հոռոմ, Լուսակերտ, Սարատակ, Հայրենյաց եւ Գուսանագյուղի ցանքատարածքները: 20 րոպե տեղացած կարկուտից վնասվել են նաեւ Վայոց ձորի Եղեգնաձոր քաղաքի, Գլաձոր, Վերնաշեն, Աղավնաձոր, Վարդահովիտ գյուղերի խաղողի այգիները, ցորենի արտերն ու բանջարաբոստանային ցանքատարածքները:

Նույն օրն Արագածոտնի մարզի Ջորագյուղ գյուղում տեղացել է 1,5-2 սմ տրամաչափով կարկուտ, որին հաջորդել է ուժեղ քամին ու հեղեղը: Աղետի հետեւանքով վնասվել են գյուղի բանջարաբոստանային կուլտուրաները, պտղատու ծառերը, ինչպես նաեւ գյուղամիջյան ճանապարհներն ու կամուրջները:

Վթարից զոհվել է մեկ ուղեւոր

Հուլիսի 25-ին Ջերմուկ-Վայք ճանապարհի 12 կմ ԳԱԶ-2410 մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի հատվածից եւ գահավիժել ձորը: Վթարի հետեւանքով վարորդը՝ 1977 թ. ծնված Գրիգոր Գրիգորյանը սպանվել է մարմնական վնասվածքներ ստանալով, իսկ կողքի ուղեւորը՝ 1979 թ. ծնված Հայկ Պողոսյանը տեղում մահացել է:

Ամուսինը դաժանորեն սպանել է կնոջը

Ինչպես տեղեկացանք ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության օպերատիվ տեղեկագրից, հուլիսի 22-ին ոստիկանության Սպիտակի բաժին քաղաքացիներից ահազանգ է ստացվել, որ Արեւաբող գյուղում Մհեր Հ.-ի տանը հայտնաբերվել է վերջինիս կնոջ՝ Ադա Ոսկանյանի դիակը: Խումբը նշված հասցեում հայտնաբերել է Ա. Ոսկանյանի դիակը՝ դեմքի մասում կաթսուկների հետքերով: Սպանության կասկածանքով բերման են ենթարկել վերջինիս ամուսնուն՝ 1967 թ. ծնված, նախկինում դատված Մհեր Հակոբջանյանին: Վերջինս նույն օրը, վիճաբանության ժամանակ ծեծելով իր կնոջը՝ Ադա Ոսկանյանին, պատճառել է մարմնական վնասվածքներ, որից էլ նա մահացել է: Մ. Հակոբջանյանը ձերբակալված է, քննությունը վարում է դատախազությունը:

Դանակահարություն

Հուլիսի 23-ին ոստիկանության Էրեբունու բաժին հիվանդանոցից հաղորդվել է, որ թիկունքի եւ դեմքի մասերում սուր կտրող գործիքից ստացած վնասվածքներով իրենց մոտ է տեղափոխվել Հրաչ Ն.-ն: Մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել 1971 թ. ծնված, նախկինում դատված Սարգիս Ղ.-ին, որը նույն օրը վիճաբանության ժամանակ դանակով հարվածել եւ մարմնական վնասվածք է պատճառել Հրաչ Ն.-ին: Կատարվում է նախաքննություն:

Կանայք էլ են դանակով կռվում

Հուլիսի 24-ին ոստիկանության Մալաթիայի բաժնի աշխատակիցները ժամը 03.40-ին Սեբաստիա-Մալաթիա փողոցների խաչմերուկում մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով բերման են ենթարկել 1977 թ. ծնված Քրիստինե Հ.-ին: Վերջինս նույն օրը վիճաբանության ժամանակ դանակով հարվածել եւ մարմնական վնասվածք է պատճառել Լաուրա Պ.-ին: Կատարվում է հետաքննություն:

Խարդախը բռնվեց

Հուլիսի 24-ին ոստիկանության Կենտրոնականի բաժնի աշխատակիցները խարդախություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկել 1966 թ. ծնված Արայիկ Ա.-ին: Վերջինս վարկ տրամադրելու պատրվակով Նիկոլայ Մ.-ից խաբեությամբ վերցրել է 8.000 ԱՄՆ դոլար: Արայիկ Ա.-ն ձերբակալված է, կատարվում է նախաքննություն:

Մ. ՄԱՐԿԱՐՅԱՆ

ՀՀ Կենտրոնական բանկը 27.07.2004թ. ժ.9.00 ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները.

ISO ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	523.74	518.50	529.00
EUR	1	ԵՎՐՈ	637.02	633.20	640.80
RUR	1	Ռուս. ռուբլի	18.00	16.90	19.10

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այն մարդիկ, ովքեր մտածում են օտար երկիր գնալու մասին եւ կարիք ունեն իմանալու, թե ինչ է սպասվում իրենց օտար պետություններին «հանձնվելու», փախստականի կարգավիճակ հայցելու դեպքում կամ աշխատանք կատարելու ինչպիսի ռեալ պայմաններ եւ հեռանկարներ կան, ի վերջո ո՞րն է իրականությունը եւ որը միֆը, արդա կարող են այցելել ՀՀ կառավարությանն առընթեր **միգրացիայի եւ փախստականների** վարչություն, որի հասցեն է՝ Հր. Քոչարի 4, ինչպես նաեւ զանգահարել **224727** «թեժ **գիծ**» հեռախոսահամարով եւ հիշատակված հարցերի վերաբերյալ ստանալ բարձրորակ, տպարդիչ եւ անվճար խորհրդատվություն:

CONVERSE BANK

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի **հուլիսի 22-29-ը «Կոնվերս բանկը»** հայտարարում է **մրցույթ**՝ գլխամասային գրասենյակի մաքր եւ միջին ձեռնարկատիրական գործունեության վարկավորման եւ «Կենտրոնական» մասնաճյուղի վարկային բաժնի ***վարկային մասնագետների*** թափուր հաստիքների համալրման նպատակով: Մասնագիտական կրթությունն ու աշխատանքային փորձը պարտադիր չեն:

Լրացուցիչ տեղեկությունների եւ հայտերի լրացման համար կարող եք այցելել՝

«Կոնվերս բանկ», Վազգեն Սարգսյան 26:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Դրամավարկային տեղեկատու

Հուլիսի 16-22-ն ընկած ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշները հետեւյալն էին.

Դրամական բազա, դրամական զանգված

Փողի բազան աճել է 270 մլն դրամով եւ հուլիսի 22-ին կազմել 109 մլրդ 579 մլն դրամ: Զուտ արտաքին ակտիվներն (առանց սեփականաշնորհման միջոցների) աճել են 364 մլն դրամով, իսկ զուտ ներքին ակտիվները նվազել են 94 մլն դրամով:

Հուլիսի 9-16-ն ընկած ժամանակահատվածում փողի զանգվածն աճել է 1 մլրդ 608 մլն դրամով եւ հուլիսի 16-ին կազմել 237 մլրդ 788 մլն դրամ (ընդգրկված են 19 բանկերի ցուցանիշները): Շրջանառության մեջ կանխիկ դրամը նախորդ շաբաթվա համեմատ նվազել է 873 մլն դրամով, կազմելով 84 մլրդ 891 մլն դրամ: Դրամով ցպահանջ ավանդները աճել են 2 մլրդ 433 մլն դրամով եւ կազմել 29 մլրդ 405 մլն դրամ: Դրամով ժամկետային ավանդները նվազել են 1 մլրդ 34 մլն դրամով եւ կազմել 10 մլրդ 59 մլն դրամ: Արտարժույթով ավանդները աճել են 1 մլրդ 81 մլն դրամով եւ կազմել 113 մլրդ 433 մլն դրամին համարժեք արտարժույթ: Ընդ որում, արտարժութային ցպահանջ ավանդները կազմել են 55 մլրդ 140 մլն դրամ (նախորդ շաբաթվա համեմատ նվազել են 959 մլն դրամով), ժամկետայինները՝ 58 մլրդ 293 մլն դրամ (աճը՝ 2 մլրդ 40 մլն դրամ):

Ֆինանսական շուկա

Հուլիսի 16-22-ն ընկած ժամանակահատվածում թողարկվել է 1 մլրդ 600 մլն դրամի 48-ամսյա ՊՊ՝ 7,1684 տոկոս տարեկան եկամտաբերությամբ, եւ մարվել է 600 մլն դրամի 41-շաբաթյա ՊՊ՝ 10,2433 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

ՊՊ երկրորդային շուկայում ԿԲ-ն իրականացրել է 1,245,700,000 դրամի ՊՊ առք՝ 7 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Նշված ժամանակահատվածում ԿԲ-ն իրականացրել է 700,000 ԱՄՆ դոլարի արտարժույթի տրամադրման սվոփ՝ 56 օր տեւողությամբ, 3,59 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Արտարժույթի շուկա

Հուլիսի 16-22-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքն արժեւավորվել է 1,57 տոկոսով՝ 524,07 դրամից հասնելով 515,99 դրամի:

Նշված ժամանակահատվածում արժութային շուկայում իրականացվել են շուրջ 48,974 հազ. ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքներ, որոնց միջին կշռված փոխարժեքը կազմել է 516,83 դրամ:

Շաբաթվա ընթացքում ԿԲ-ը գնել է 2 մլն ՌՊ ռուբլի՝ 17,98 դրամ փոխարժեքով:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Պետության կողմից աջակցություն ստացած Երեւանի «ԵՐԵՎԱՆ» հաճախարանը հաճախող Մոսկվայի հավատարմագրված ԱՌԱՎՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՏՈՒՐԻԶՄԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ինստիտուտների
ստանում է 2004/2005 ուսումնական տարվա ընդունելությունը հետեւյալ ֆակուլտետներում եւ մասնագիտություններով
Էկոլոգ, բուհ, ճարտարապետ, ատամնաբույժ

1. **Իրավագիտություն**-Պետական իրավունք, հարկադրական իրավունք, էրեական իրավունք, դասական փորձաքննություն, միջազգային իրավունք, հարկային եւ մաքսային իրավունք.
2. **Տնտեսագիտություն**-Կառավարում տնտեսական ոլորտում՝ առողջապահության, գիտության, տուրիզմի բիզնես, ունեցվածքի, առատության, ֆինանսների, արժեթղթերի, բանկերի, սեփականության, կուլտուրայի:
- **Կոմերցիա**
- **Ազգային առատության տնտեսագիտություն եւ կառավարում**
- **Դիզայն** - հագուստի, միջավայրի:
3. **Ինֆորմատիկա-Ավտոմատիզացված սիստեմներ:**
4. **Օտար լեզուներ**-անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն:
5. Կազմակերպվում են **թեկնածուների 10-ամյա դասընթացներ:**

Ընդունելությունը կատարվում է հարցազրույցի ինման ձեւ: Ուսուցումն անցկացվում է **հայերեն եւ օտարերեն** լեզուներով՝ ինտեգրացված ուսուցման կոնցեպցիայի նոր մեթոդով՝ առկա, հեռակա եւ էքստեռն: Ուսման տեւողությունը՝
միջնակարգ կրթությամբ՝ 4-5 տարի, 300-400 $, ամսական,
բարձրագույն կրթությամբ՝ երկրորդ մասնագիտություն՝ 1-2 տարի՝ 400 $, ամսական,
մագիստրատուրա-ասպիրանտուրա՝ 2 տարի՝ 450 $, ամսական,
8-10 դաս. հոլեթ, 1-2 տարի՝ 200 $, ամսական,
ԼՂՀ հարկադրիների համար 230-250 $, ամսական,
երկրաբարձի գրաբ դիմորդների հա. վարձը 250 $, ամսական:
Ուսումնական պրակտիկան կարող է կազմակերպվել Գերմանիայում, ԱՄՆ-ում, Բելգիայում, Շվեյցարիայում եւ Չեխիայում: Շրջանավարտներին տրվում է **ՀՀ դիպլոմ, ՌՊ պետական դիպլոմ, սերտիֆիկատ՝ երեք օտար լեզուների եւ հաճախարգելային տեխնիկային** տիրապետելու մասին: Դիպլոմը ճանաչվում է **Եվրոպայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Իսրայելում** (համաձայն Լիսաբոնի 01.06.2000 թ. կոնվենցիայի) **եւ ԱՊՀ երկրներում:**

«Երեւան» հաճախարանը հաճախում է Մոսկվայի պետական գործարարական եւ հումանիտար էկոլոգիական ինստիտուտների միակ ոչպետական մասնաճյուղը Հայաստանում: Կան գեղեցիկ, հանգանգարան:
Մեր հասցեն՝ Երեւան, Մաշտոցի պողոտա 5/2, Շեյնինի անվան N 42 դպրոց, հեռ.՝ 53-08-44, 53-09-98
ԼՂՀ Ք. Ստեփանակերտում գործում է մասնաճյուղ, հասցեն՝ Պետ Մանուկյան 23 բ հեռ.՝ 4-39-94 (07) 22-05-55
ՀՀ Թալին, Սպանդարյան փող N 3, հեռ.՝ (0490) 2587
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10.00-18.00

до 31 августа
UNIBANK
ВКЛАД
ОЛИМПИЙСКИЙ
9
12 месяцев
% годовых
от 1000 USD
ежемесячная капитализация или выплата процентов

СТАНДАРТНЫЕ ВКЛАДЫ В ДРАМАХ И ВАЛЮТЕ

Срок вклада	Выплата процентов	AMD До 5 млн.	USD, EURO До 10.000
до востребования		0*	0*
31 - 90 дней	в конце срока	7,5	5,5
	ежемесячно	7	5
91 - 182 дня	в конце срока	8	6,5
	ежемесячно	7,5	6
183 - 364 дня	в конце срока	8,5	7,5
	ежемесячно	8	7
365 - 550 дня	в конце срока	9	8
	ежемесячно	8,5	7,5

Вклады превышающие 5 млн. AMD или 10 тыс. USD, EURO и/или сроком более 550 дней - по индивидуальным ставкам.
* в отдельных случаях процентная ставка определяется на договорной основе
Минимальная сумма срочных депозитов
50.000 AMD
100 USD, EURO

АДРЕСА ФИЛИАЛОВ ЗАО "ЮНИБАНК"

Центральный офис
г. Ереван, ул. Амиряна 12
тел: (3741) 539870
e-mail: unibank@unibank.am

Филиалы в г. Ереване:
Филиал "КЕНТРОН"
ул. Абовяна 26
тел: (3741) 542431
Филиал "МАЛАТИЯ"
ул. Себастия 141
тел: (3741) 776627
Филиал "КОМИТАС"
ул. Комитаса 15/2
тел: (3741) 261838

Филиалы в Армении:
Филиал "ВАНАДЗОР"
г. Ванадзор, ул. Тигран Мец 53
тел: (37451) 40872
Филиал "ГЮМРИ"
г. Гюмри, ул. Ахтанаки 1
тел: (37441) 33055

ЮНИБАНК
РЕАЛЬНЫЕ ИНВЕСТИЦИИ
53 98 70
www.unibank.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 56-24-63

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրած է տպագրության՝ 26.07.2004 Գինը՝ 100 դրամ